

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 29

19 ՅՈՒՆԻՍ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԱՍԻՍ Շաբաթաբերթի տարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար քառսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Յրանք կամ 5 բուլլի: Թղթատարական ծախքը եմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք իսկոյն իմացնեն եմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկանքն անկասողութեան չեն առնուիր:

Եւ արտակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայմաններով:

Ձեռն-Բէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیاده غلطاده (ماسيس) غرضه سی اداره سی

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՀԱՋԱՐԱՆՈՐ ՏԱՐԻՆԵՐ

Աս նոր գիւտի Օրուան հետ համեմատելով խնայ քիչ կարեւորութիւն մը ունին: Խողառանձ (սըրաճա) և արեան տկարութիւն և միւս արեան քշուլթեան հետեւինքները, որոնք մարմնոյ տկարութեան նշաններն են, աւելի արեաները դարմանող և բժշկող դեղ մը կրնայ միայն ամեն կարեւոր և ամենասքանչելի բան մը համարուիլ: Ահաւասիկ հիմայ աշխարհիս մէջ կայ դեղ մը բոլոր այն ախտերու դէմ:



Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

23

SCOTT'S EMULSION

որ Աւելցական միջնորդի մէջ գտնուած փոշինէր չորցնելուն պէս, նոյն հիւանդութիւնները կը բժշկէ:

ԸՍԳՕԹԻ ԲԸՂԸԳՐՈՒԹԻՈՒՆ

նաեւ մարդկային մարմինը շրջապատած բոլոր ախտերը հեռու կը վերնաէ:

ԸՍԳՕԹԻ ԲԸՂԸԳՐՈՒԹԻՈՒՆ

Արեան տկարութիւն ունեցող տղոց կեանքը կը փրկէ:

Բոլոր դեղատեսակները և բժշկականները ինքնին:

ԱՊՍՈՒԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ դաւազաններ եւ այլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գինը համար հարիւրին 5 դեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ հիւստուած չեն՝ 100ին 10 զեղչով ետ կ'առնուին: Իսկ ապառիկ զբնողներէն՝ 100ին 15 զեղչով:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կըսեն թէ աժառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ. ԳՈՒՂԵԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած քարմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք աժառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, ձէլալ պէյ իւան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն գնելու պէտք ունեցողները կրնան դիմել Կամուրջին գլուխը լրագրավաճառ Միսաք աղային:

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանսո. Կապիտալի թանկութեան ֆոնդային ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գոհ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ դաւառներու կարգ մը պաշտօնատուններէն զատ, Բարիզի Օբէրա, Վոսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆոլի-Տրամաթիք եւայլն թաղոնները, Նաեւ Պոռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թաղոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատունները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտիւնիէռի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսպորտներ, Հալլը-Մարսիլիա նաւարկութեան, Ծովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւններ:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր Կազմական Կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական նախարարութեան քննութեանը. նոյնպէս Այնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն:
Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌՆԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Դ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie générale d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ. — Պոլիս, Մամուտ փաշա, Պէոյիւք Երլտըզ խան, թիւ 14, Լա Դօնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Դառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող ռանքիւի վաճառատուն մը, Պոլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, թիւ 46, ուր գաւառներէն առեւտրի յաճախարարութիւններ կ'ընդունուին:



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԻԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուժազույ արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԻԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄ. ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵՆԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՒՈՎ ՈՒՂԵՒՈ. ԲՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՒ. րուելուն դէմ:

Ընկերութեան զրամագլուխը, ամբողջապէս վճարուած 10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան 137,300,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա- 282,000,000 »
զլուխ եւ լիստուց հատուցում

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տուկոս 54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց Բամար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա, — եւ Ղալաթիոյ Դործակալութեան, Էսկի Կէօմրիւք խան, Բարափին վրայ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՋԱԿ

Վարժարանիս նպատակն է տալ միջնակարգ, հիմնական կրթութիւն մը, հետեւելով Անգլիական ու Ամերիկեան նոյնօրինակ Հաստատութիւններու (High School) ծրագրին: Նոյն ատեն ալ, սակայն, նկատի առնելով երկրին պահանջները՝ մասնաւոր խնամք կը տարուի տոհմային ու Պետական լեզուներու եւ գրականութեան, ինչպէս նաեւ ֆրանսերէնի: Ամենէն պզտիկ կարգերէն սկսելով՝ կարգ մը դասեր կ'աւանդուին անգլիերէն լեզուով, որպէս զի բոլոր աշակերտները կանուխէն ընտելանան Անգլիերէնի: Տնօրէնը Տոքթ. Չէյմպըրս կ'աւանդէ տոմարակալութեան դասը, որ մասնաւորապէս կը յարմարցնէ ընթացաւարտները գործնական կեանքի: Առողջապահութեան դասը կ'աւանդէ վարժարանին բժիշկը որ միանգամայն մօտէն կը հսկէ բոլոր աշակերտներուն առողջութեանը վրայ: Դիտական ճիւղերու դասախօսութիւններն արդիւնաւորելու համար՝ վարժարանը ունի պիտանի ու ահարժեշտ գործիքներու ընտիր հաւաքածոյ մը: Նօրակառոյց նպատակայարմար շէնքը եւ նորաստաց ընդարձակ հողերը՝ ամէն ժամանակեւ աւելի նպաստաւոր են աշակերտներու հանգըստութեան եւ առողջութեան, գեղը ըլլալով արդէն հանրածանօթ՝ իր մաքուր օդովն ու գեղեցիկ տեսարաններովն:

Վարժարանիս վերաբացումը (24րդ տարեշրջան) տեղի պիտի ունենայ Սեպտեմբր երեքին (Ն. Տ.): Տարեթոշակն է 16 օսմ. ոսկի: Աւելի մանրամասն տեղեկութիւններու համար դիմել անձամբ՝ Պայպրլ-Հասուգ, Կ. Պոլիս, կամ նամակով Տնօրէնութեան, Պարտիզակ:

ՀԱՅՈՒՇԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱԲԱԶԱՐ

Վարժարանիս նոր տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 9ին. (Ն. Տ.): Չորեքշաբթի Դիշերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ. ոսկի, որուն կէսը պէտք է վճարել Սեպտ. 1 սկիզբը. միւս կէսը Յունուարի մէջ, Դաշնակի դաս առնողները 3 իսկ երգհօնի դաս առնողները 1½ ոսկի աւելի կը վճարեն:

Կէս տոմսակով: Ատարազար ուղեւորելու եւ ուրիշ դիւրութեանց համար՝ կարեւոր է որ վարժարանին գիշերօթիկ աշակերտուհիները ինչպէս նաեւ յառաջիկայ տարեշրջանին նոյն վարժարանին աշակերտիլ փափաքող օրիորդները, իրենց անունները ղրկեն՝ եւ կամ անձամբ կամ իրենց պաշտպանին միջոցաւ ներկայանան՝ Մր. Ու. Ու. Փիթի, Թիւ 5, Ամերիկեան Խան Կ. Պոլիս մինչեւ Սեպտ. 4, (Ն. Տ.):

Վարժարանին յայտագիրը ուղղորդներուն ճրի կը ղրկուի: Ուրիշ տեղեկութեանց համար գրել Տոքթ. Ս. Էֆ. Գալալճեանի, Ատենապետ Խնամակալութեան, Ատարազար:

ՄԱՍԻՆ

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻ 29

19 ՅՈՒԼԻՍ 1903

ՀԱՆԳԻՍՏ

Տ. ՄԵԼՔԻՍԵԴԷԿ ՍՐԲԱԶԱՆ ՄՈՒՐԱՏԵԱՆՅԻ

Հայ եկեղեցականութիւնը իր պատկառելի ու սիրուած դեմքերէն մէկն ալ կորսնցուց: Տ. Մելիքսեդէկ արքեպիսկոպոս Մուրատեանց, Իզմիրի արժանընթիւ առաջնորդը, երկար ու ճառագայիկ հիւանդութենէ մը ետք, հոգին աւանդեց անցեալ շաբաթ գիշեր: Այս դառն մահագոյժը, զոր հեղազիւրը կիրակի առաւօտ հաղորդեց Ս. Պատարիարքին, նոյն օրն իսկ տարածուելով մայրաքաղաքի մէջ՝ խորին տալուրութիւն մը առաջ բերաւ հայ համայնքին ամեն դասակարգերուն վրայ, եկեղեցականներուն ու աշխարհականներուն անխտիր, — տալուրութիւն որուն հարազատ արձագանգը եղան օրաքերթերը որոնք երկուշաբթիէն ի վեր զգածեալ տղերով ընդարձակ ու սեւածիր սիւնակներ կը նուիրեն ողբ-սցեալ Սրբազանին կենսագրութեանը, յիշատակներուն եւ օծման ու յուղարկատուութեան նկարագրութեանը:

Իզմիրի առաջնորդութեան համեստ՝ բայց իրեն համար սիրելի դարձած հովուական պաշտօնը որուն մէջ ամփոփուած մնաց Տ. Մելիքսեդէկ արքեպիսկ. 1877էն մինչեւ 1888, եւ երկրորդ անգամ ալ 1898էն մինչեւ այսօր, անբաւական եւ, բնականաբար, իրեն նման ուսեալ. կարող ու հեղինակաւոր եկեղեցականի մը՝ ի յայտ բերելու իր բոլոր արժանիքը: 1885ի Կաթողիկոսական ընտրութիւնը, — որուն պարագաները դեռ երեկուան սէս քամի են ամենուս մտքին մէջ, հակառակ տասներորդ տարիներ անցած սահման ըլլալուն, — Հայ. եկեղեցւոյ հովուապետական եւ բարձր պաշտօնը նուիրելով Տ. Մելիքսեդէկ Սրբազանին, յայն ասպարէզ մը կը բանար անոր գործունեութեան ու կարողութեանը առջեւ զորս հշմիածնայ Ընտրողական ժողովին ստուար մեծամասնութիւնը կը գնահատէ ու կը հռչակէ իր փոխով: Բայց երկրորդ ընտրելիին՝ Մակար Սրբազանի վաւերացումը, իբրեւ Կաթողիկոս, ընդհանուր յուսալսաբութեան մը մէջեղ կ'աւելցուց Տ. Մելիքսեդէկ Սրբազանը՝ Հայրապետական սեմին վրայ: Այդ բուականէն ի վեր, քեզ մարմնով ու մտքով առողջ, եւ մինչեւ կեանքին վերջին վայրկեանը բոլորանուէր եկեղեցւոյն, սրաբեկ ու մեղմադձօտ տալուրութեամբ մը համակուած մնաց ալիքաղ Սրբազանը, քաղաքներու, եկեղեցական գրականութեամբ, եւ հոգեւոր հովուութեամբ միայն պարագելով, իբրեւ միաբարակաւ զբաղումներ իրեն համար:

Տ. Մելիքսեդէկ Սրբազան իր փայլուն եւ հայ բնատոնմիկ եկեղեցականի՝ իր ծանօտանութեամբը, իր անբասիր կեանքովը, իր խօսելու, քաղաքներու գրաւիչ լրջութեամբը եւ իր անցածելի երեւոյթովը: Կորովի գրիչ մը ունէր եւ կը բոլոր մեկէ աւելի երկասիրութիւններ որոնց մէջ կը փայլէ իր բովանդակ հմտութիւնը: Իր մահը՝ զինքն մօտէն հանչեցողներուն ու սիրողներուն հոգեցունց ցաւ մը պատճառելով, ոչ նուազ դառնութեամբ կը համակէ զինքն անունով ու համբաւով միայն հանցողները:

Հանգի՛ս իր հոգւոյն:

ՀԱՅ ԿՆՈՋ ՍԵՌԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ

Մասիսի Ձորի թուին մէջ համակերկին Օննիկ Զիֆթէ-Սարաֆ «Շահարիկ»ի հրատարակած գաւառական մէկ Վիպակէն թելադրուելով՝ հետաքրքրական խնդիրներ կը քրքրէր գաւառացի հայ կնոջ բարուց ինչ ինչ կողմերուն նկատող, այս առթիւ գաւառացի գրողներուն ուղղելով մի քանի շահեկան հարցումներ որոնց կ'արժէ պատասխանել:

Գաւառացի գրողներու կողմէ հայ կնկան աւանդական պարկեշտութեան և անսասան բարոյականին վրայով հին ու նոր գրեւածներուն մէջ կրնան քիչ շատ չափազանցութիւն կամ չօլէնութիւն գտնուիլ, բայց իրողութիւնն այն է թէ ընդհանուր առմամբ ճիշտ են անոնք:

Իրաւ է թէ գաւառացի հայ կիներն ալ կիճ են ամէն բանէ առաջ և բնականաբար անոնց համար ալ օտար չեն ո՛չ սէրը ոչ սեռային զգացումը, բայց պէտք է ընդունիլ թէ ամէն զգացումներու նման՝ սեռային զգացումն ալ—որքան որ ալ զգացումներուն է՛ն բնականն ու անդիմադրելին ըլլայ այն—ենթակայ է ինչ ինչ պայմաններու տակ մշակուելու ու զարգանալու և ուրիշ պայմաններու տակ սեղմուելու և սահմանափակուելու: Արդ՝ կրօնքի և բարոյականի դարաւոր ժառանգական ըմբռնումներ, մեր արեան ու միտին հետ չաղուեալ, մինչեւ մեր ոսկորներուն ծուծը թափանցած, կարգ մը սեղմումներու ենթարկած են մեր մէջ սեռային զգացման արտայայտութիւնը որուն ոչ նուազ նպատած են մեր միջավայրն ու կեանքի պայմանները: Հայ կինը՝ ուրեմն, այս ժառանգական ու ա՛լ բնազդական դարձած ըմբռնումներու ազդեցութեան տակ, իր սիրոյն սորված է թափ տալ միայն ա՛յն սահմանին մէջ զոր գծած են ընկերական կարգ-ուսարքերն ու նախապաշարումները. սեռային բնազդը, այդ սահմանէն դուրս, հաւատացէք, պէտքն իսկ զգացած չէ յագուրդ փնտռելու, եթէ նոյն իսկ յագուրդի ամէն թոյլատրած միջոցներէ դուրի գտնուած ըլ-

լայ: Չեմ ըսեր նոյն իսկ թէ այդ սահմանը գլխի անցնելու համար մեղքի կամ ամօթի զգացումն է որ կը կասեցնէ հայ կինը: Մեղքի կամ ամօթի զգացումը, հայ կնոջ համար այլապէս շատ զօրաւոր զգացում մը ըլլալով հանդերձ, չեմ կարծեր որ պիտի զօրէր բռնազդի մը ուժին դէմ: Ես պիտի ըսեմ թէ բնազդը ինքն է որ ինքնաբերաբար կը լռէ այդ սահմանին առջեւ: Ժամանակաւ մեր գաւառացի հարսերը երկար տարիներ երեսնին ծածկ կը պահէին և մուռն կը կենային, —սովորութիւն մը որ դեռ տեղ տեղ կը չափուեալուի—դրեթէ առանց տրտնջալու, առանց նոյն իսկ գիտակցութիւնն ունենալու թէ զոհողութիւն մըն է որ կ'ընեն, իբրեւ թէ շատ բնական բան մը ըլլար այդ սովորութիւնը: Ամենքս ալ կարգացած ենք թէ Հնդկաստանի կիները իրենց ամուսնոյն մահուանէ վերջ ինքնաբերաբար կ'երթային իրենց ամուսնոյն դիակին հետ խարոյկին մէջ նետուելու, տեղւոյն սովորութեան համաձայն: Ասոնք հոգեբանական երեւոյթներ են որոնց բացատրութիւնը ինձմէ սորվելու պէտք չունի Օննիկ Զիֆթէ-Սարաֆ: Եթէ դարաւոր ըմբռնումի մը, սովորութեան մը, նախապաշարումի մը անողոք ուժը կրնայ նոյն իսկ բնազդներուն էն հզօրը՝ կեանքի պահպանման բնազդը խեղդել, անբնական չէ եթէ նմանօրինակ պայմաններու տակ սեռային զգացման բնազդն ալ կը չափաւորուի, կը սահմանափակուի՝ դարմանք ազդելու աստիճան: Ամենեւին կեղծիք չկայ ասոր մէջ: Ուստի Զիֆթէ-Սարաֆ թո՛ղ անպատճառ չօլիկութեան չվերագրէ այն ամէն գրեւածները որոնք հայ կնոջ խիստ բարոյականը և աւանդական պարկեշտութիւնը գրեւատած են:

Ասոր հետ մէկտեղ ըսել չենք ուզեր թէ գաւառական ըմբռնումով հատկցուած պարկեշտութեան սահմանները գլոյդ անցնող կիներ չեն գտնուիր գաւառներու մէջ. հարկաւ կը գտնուին և թերեւս բաւական թուով: Մեր խօսքը սակայն մեծամասնութեան հա-

մար է որուն վրայ միայն կարելի է հիմնել որ-և է ուղիղ դատաստան: Ամէն երկիրներու մէջ ալ ժողովուրդներու ասուար մեծամասնութիւնը կանխակալ ըմբռնումներու կոխտուած ճամբաներէն կ'ընթանայ հանդարտ համարակերպութեամբ մը, բայց կան բացառիկ տիպարներ որ այդ ճամբաներէն կը չեղին, փորձելով խրոխտ ընդլուծմը նախապաշարունակներու կապանքներուն դէմ: «Շահարիկ»ի նկարագրած որբեւայրին այս տիպարներէն է ահա, որուն նմաններ ալ ստուգիւ գոյութիւն ունեցած են գաւառներու մէջ: Եւ պէտք է ըսել թէ այդ որբեւայրի ընթացքին մէջ չկայ կէտ մը որ ճշմարիտ պարկեշտութեան դէմ մեղանշող բնութիւն մը ունենայ:

Սակայն կէտ մը կայ ճշգուելու կարօտ: Գաւառի նահապետական այս մաքուր բարքերը, պէտք է ըսել, հիմա շատ տեղերու համար երբեմնի իրողութիւններ են այլ ևս: Շուրջ կէս դարէ ի վեր դուրսերու հետ յարաբերութեանց օր ըստ օրէ աւելնալուն և ուրիշ շատ մը պատճառներով զորս երկար կ'ըլլայ մի առ մի թուել, մեր ժողովուրդեան կարգ մը դարաւոր ըմբռնումները, ի մասին ընտանեկան կեանքի, սկսած են խախտիլ: Մեր բնիկ բարքերը, սովորութիւնները հետզհետէ կործանցնելու վրայ ենք և դեռ անոնց տեղ ժամանակ ունեցած չենք լաւագոյն բաներ մը դնելու: Անուրանալի է թէ քաղաքակրթութեան մէջ անցման օրջան մը կը բոլորեն կոր մեր բարքերը: Եւրոպայէն եկող նոր քաղաքակրթութեան հոսանքին տակ մեր հին քաղաքակրթութիւնը գրեթ թողուցինք ու նոր մըն ալ դեռ չկրցինք ստեղծել: Փոխանցման շրջան մը միշտ յոռեգոյն շրջան մըն է. ան որոշ գոյն մը չունի և կրնայ բարքերը ծայրայեղութենէ ուրիշ ծայրայեղութեան տանիլ: Ճիշտ այս պատճառին վերագրելի են վախճանէ մը ի վեր լսուած ու տեսնուած այն աղտոտ ու ագիւղ բարքերը որոնք գաւառներու մէջ տիրող դառնալ սկսած են: Գիւղերու մէջ մանաւանդ անպահանջութիւնը աւելի աչքի կը դարնէ: Գիւղացի ժողովուրդը աւելի ագէտ ըլլալով՝ շատ աւելի գէշ կերպով ինկած ու աւրուած է: Անոր

մէջ բարոյականը—ոչ միայն սեռայինը՝ այլ և ամէնէն լայն իմաստով բարոյականը—դադրած է գրեթէ դոյութիւն ունենալէ: Եւ դժբախտաբար ճիշտ է թէ ապօրինի յարաբերութիւններ և կենակցութիւններն ալ տեղ տեղ շատցած են և ասիկա ոչ միայն այր կամ կին չունեցող կանանց կամ արանց, այլ ունեցողներուն համար ալ:

Գալով «Շահարիկ»ի վիպակին մէջ երկու նշանածներու յարաբերութեանց պարագային, գաւառական քաղաքներու մէջ նշանածներու այդքան աղատ յարաբերութիւններ, առանձին տեսակցութիւններ ներելի համարուած չէին մինչեւ վերջին տարիներս, բայց գիւղերու մէջ կարծեմ թէ ներելի եղած են ինչ ինչ սահմաններով: Նշանակութեան արժանի է թէ գիւղացի հայ աղջիկներն ու կիները սկիզբէն ի վեր վայելած են շատ մը ազատութիւններ և համարձակութիւններ որոնք զլացուած են քաղքերցի կիներուն: Օրինակի համար՝ գիւղացի կիներ և աղջիկներ բաց երեսով կը պտտին և երբեք մարդերէ չեն քաշուիր, մինչդեռ քաղաքներու մէջ բնակակից ժողովուրդներու սովորութեանց ազդեցութեամբ՝ շատ տեղեր կիները օտար էրիկ մարդոց չեն երեւիր, և առհասարակ՝ գլուխնին ծածկած դուրս կ'ելլեն: Նմանապէս գիւղերու մէջ այր և կին խառն համախըմբումներ, աղջիկներու և երիտասարդաց միասին երգելը, պարելը եւն. շատ սովորական բաներ են, մինչդեռ քաղաքներու մէջ շատ տեղ կանանց համար ամօթ համարուած են ատոնք: Այսպէս ալ գիւղերու մէջ երկու նշանածներուն զիրար բնաւ կամ առանձին չտեսնելու սովորութիւնը երբեք գոյութիւն ունեցած չէ:

Մեր բնիկ բարքերը ամէն տեսակէտով աւելի լաւ պահպանուած են գիւղերու մէջ որոնք համեմատաբար զերծ մնացած են օտար ազդեցութիւններէ: Եւ այս վերի խորհրդածութիւնները ցոյց կուտան թէ մեր բարքերը իրենց բնիկ վիճակին մէջ աւելի համարձակ էին և աւելի հաշտ՝ բնական ձգտումներու հետ, ինչպէս նաև զերծ սխալ ըմբռնուած պարկեշտութեան մը անիմաստ կաշկանդումներէն որոնք յատկանշիչ եղած են քաղաքի բարքերուն:

ՅՈՎՀ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԻՆԿԱԾ ԿԻՆԵՐ

(ՆՈՐԱՎԷՊ)

Երէկ վերջին անգամ Նինէդը տեսնելու գացի :

Ապպասիէի աւագուստքին վրայ նորակառոյց ֆրանսական Հիւանդանոցը Գահիրէէն հազիւ քսան վայրկեան հեռու է : Արեւը իր էն տաք ճառագայթներով կը լուայ հոն ապաստանող անտաւորներու տկար մարմինները՝ որոնց քիչ մը կը յամենայ քայքայումը : Այդ շրջակայքը ցրուած են գեղակերտ վիւղաներ՝ որոնք հետզհետէ Ապպասիէն աւելի հաճելի կ'ընեն :

Հիւանդանոց հասնելուս՝ փութացի Սէօռ Ալիսին, ինչպէս սովոր էի ընել ամէն մէկ այցիս, որոշ տեղեկութիւններ առնելու համար հէք աղջկան մասին :

— Օհ, Տիար, աղէկ չերթար. քանի՜ մը օրէ ի վեր ջերմերը սաստկացան : — Ու՛ տեսնելով դէմքիս թախծալի ծամածուումը՝ աւելցուց մարապետի փաղաքուշ ժպիտ մը կեղծելով .

— Բայց Տօքթ. Պ. կ'ըսէ թէ թոքերուն վրճակը ոչինչ ունի յուսահատելիք :

Աս ըսելուն հետ՝ մեքենաբար իր քայլերը դէպ ի Նինէդին սենեակը ուղղեց, իս հոն առաջնորդելով, ու սեմին վրայէն բաժնուեցաւ :

Նինէդ ընկողմաթողի մը վրայ երկնցած էր և ձեռքը գիրք մը ունէր, *L'Infante du Jardin*, Սամէնի հրաշալի բանաստեղծութիւններու հատորը՝ զոր իրեն փոխ տուած էի :

Իր աղուորիկ տոգունած դէմքը պուպրկի ժպիտով մը երփնուեցաւ իս նշմարելուն պէս. ու նիհար մինիւնիկ ձեռքը ինծի երկընցընելով .

— Ի՜նչ աղնիւ ես, իս երբեք չես մոռնար, մրմնջեց՝ իր մարող դեղնած աչուքներուն մէջ շնորհակալութեան արցունք մը շողացնելով :

— Օ, պղտիկս, շատ դո՛ւ պիտի չըլլաս,

վրայ բերի, եթէ դիտնաս թէ հրաժեշտ առնելու համար եկայ այսօր. ճամբորդութեանս թուականը հասաւ. վաղը կը մեկնիմ. բայց ատ ըլլայ հոգդ. քեզ մինակ պիտի չի ձգեն արդէն. ու յետոյ, շուտ պիտի վերադառնամ, աւելցուցի՝ աթոռս իրեն մօտեցնելով :

— Շուտ, հոծեց անհուն արամութեան կրկարածիգ շեշտով մը՝ որ սլաքի պէս ծակեց սիրտս. որքան ալ շուտ ըլլայ, վախնամ ու ըլլայ... Եւ, ջանադիր ամոքելու խօսքին դառնութիւնը, աճապարեց չարունակելու .

— Բայց ըսէ՛ ինծի, սիրելիս, Լիօն պիտի երթամ մամաս տեսնելու և ըսելու թէ...

— Անշուշտ, ընդմիջեցի, և չորս օր պիտի մնամ հոն :

— Ըսէ՛ իրեն թէ Նինէդը չէ մոռցած աղուոր մայրիկը, և ինծի համար գրկէ՛ ժիւլը, կրտսեր եղբայրս, որ՝ անուսա տալուդ պէս՝ արդէն վիզիդ պիտի փաթտուի : Բայց տուե՛ր չըսես որ հիւանդ եմ, օհ, չէ, բան մը չըսես, որովհետեւ...

Հեղձուցիչ հազ մը պոռթկաց և իր խօսքը կիսատ մնաց : Դիկի մը բօսիօնէն տուի՝ Դրտնաթոր, պարտասած, պահ մը անշարժ մնաց ընկողմանած, անխօս, աչուքները վրաս պտտեցնելէն հիւանդի ջախջախիչ հետաքրքրութեամբ մը :

* * *

Սարգիս, դպրոցի հին ընկեր մը, բժշկական ուսանող էր Բարիդ. զուարթաբարոյ ու սրամիտ տղայ զոր ամէնքը կը փնտռէին : Կիներուն մօտ մէկէ աւելի յաղթանակներ տարած էր՝ իր խորաթափանց սև խոշոր աչուքներուն համար որոնց «սիրոյ անդունդ» կ'ըսէին : Բայց ինք չէր սիրած. չփայցումը ընդարմացուցած էր իր զգայնութիւնը և ասիկա չէր արգիլած, ընդհակառակը, որ Բարիդի պէս այլասերուած հեղրոնի մը մէջ իսկ ուսանողներուն էն բախտաւորը ըլլայ :

Գիշեր մը Թավիռն *s'Ouvert* ան, ուր կէսգիշերին կիսաշարժի պղտիկ մօլորակները կը համափայլին խուռներամ, Նինէդին հանդիպած էր, Լիօնցի աղջիկ մը, զոր քանի մը ամիս առաջ չար քախտը Բարիդի մօլութեանց մէջտեղ նետած էր :

Աչքի դարնող արդուզարդ մը չուներ.

բրթիդ տամ մը, մանրուկ դէմքով, մանրուկ ոտքերով, որ առանց ուշադրութեան չէր անցներ զբօսասէրներու սեղաններուն առջեւէն:

Սարգիս, որ ընկերի մը հետ էր, բարեւեց Նինէդը և աթոռ մը հրամցուց անոր, պիսեւրուն մէջէն բարակ մը ծիծաղելով:

Տաք ու կատակ խօսակցութենէ մը վերջ դոր կը համեմէին քանի մը բաժակ, դուրս ելան՝ նրբանցքին մէջ աս ու ան բարեւելէն, արմուկուելէն, և Պուլլա առ ան զ'իդալիէնէն կառք մը նստելով Ռիւ Մօնօ ուղղուեցան՝ ուր կը բնակէր Սարգիս. միւս ընկերը բաժնուեցաւ:

Նինէդ, շատ աշխոյժ և զուարթ արտայայտութեանը հակառակ, սանդիւմանդալ աղջիկ մըն էր: Հագիւ քսան տարեկան կար, և արդէն կեանքէն վրէժ լուծելու այլանդակ գաղափարին փարած էր: Լիօնի մէջ էն պարկեշտ աղջիկը եղած էր. իր հայրը ուսուցիչ մըն էր, և լաւագոյն դաստիարակութիւնը սուած էր անոր: Օրին մէկն ալ Նինէդ սիրած էր cousin մը, «անարգ հրապուրող» մը որ՝ անոր յանկուցիչ մարմինին սիրահարուած՝ ամէն բան լմննալէն վերջ չարաչար խաբած և երեսի վրայ թողած էր ան, քըստմընելի պաղարիւնով մը:

— Երկու ելք կար. կամ մեռնելու էի այդ հիւշը, և կամ մեռնելու էի. ոճրագործի խըմորը չունենալուս, դանակէն վախնալուս, ինքզինքս բարոյապէս մեռնելու որոշումը տուի. ահա՛ թէ ինչու մոլութեան մէջ ինկայ՝ առանց քաշուելու: Հարուածը սաստիկ էր. կը սիրէի, և բաւական հպարտ էի պարապ տեղը այդ անսիրտ խայտառակին ետեւէն վազելու համար երկիրէ երկիր. մէկ խօսքով պէտք էր որ հեռանայի այդ անտանելի միջավայրէն: Հայրս հասկցաւ որ կեանքի փոփոխութիւն մը անհրաժեշտ էր ինծի, և հաւանեցաւ որ «պատուաւոր գործ» մը փնտռելու համար Բարիդ գամ: Աղջիկ մը որ ո՛չ արհեստ և ո՛չ ալ դրամագլուխ ունի, աշխարհիս բոլոր լրջութիւնը ունենալով իսկ, ինչպէ՞ս կրնայ «պատուաւոր գործ» մը գտնել հոս, կը հարցնեմ ձեզի: «Աղուոր ես» ըսին ինծի. դիտէի առ, և գործի սկսայ: Ամէնքն ալ ինծի պէս դժբախտներ են գրեթէ, շա-

տերը իյնալով՝ կը կարծեն իրենց խաբուած սէրերուն վրէժը լուծել, չարաչար վարուելով այրերուն հետ, խաբելով, կողոպտելով անոնք. յիմարութիւն անշուշտ: Մհ, ինչ ապուշներ կան. ինչ վարնոց էրիկ մարդեր. Տէր իմ, ինչեր կը տեսնեմ, և ինչեր կը լսեմ. ինչ ստորնութիւններու չեն համակերպիր իրենց քսակովը վարձուած ժամուան մը խաբուսիկ վայելումին համար, որուն մէջ փոխադարձ կամքը կը պակսի. մեր սառույց սիրտերուն վրայ կը պառկին և մեր թունաւոր շուրթերուն սուտ համբոյրները կը մուրան. ապուշները...:

Պերճախօս էր, և բորբոքած կը պատասխանէր Սարգիսին քանի մը հարցումներուն, տեսնելով թէ ազնիւ ու զարգացած անձի մը հետ գործ ունի, և քաջալերուելով անոր ազատամիտ նկատումներէն և դէպի ընկալեալ կեղծուպատիր սովորոյթները յայտնած ընդվզումներէն:

Այդ պոռթկումը յոգնեցուց Նինէդը: Ձեռքերը ծոծրակին տակ դրած, բարձին վրայէն դուրսը դէպի Սարգիսին հրավառ աչքերը դարձուց հեշտօրէն և պիշ պիշ անոնց նայելէն:

— Օ, ինչե՛ր ըսել տուիր ինծի, քնքուշս, ըսաւ անառակցած. դգուանքի մը պէտքը կը զգամ, եկո՛ւր սիրենք վայրկեան մը...:

Այլեւս բարեկամներ եղած էին, ամէն բանէ առաջ: Յաճախ իրար կը գտնէին ճաշարանը և մէկտեղ թատրոն կ'երթային: Միտքի ու սիրտի զբօսանքներու համար նախասիրութիւն մը ունէր Նինէդ իր ճաշակներուն մէջ՝ երբ կրնար իր կերպասէն դուրս ելլել և անկեղծօրէն արտայայտուիլ:

Սարգիս յաճախորդ մը և Նինէդ վարձկան մը ըլլալէ դադրած էին իրարու համար: Աւելի, պէտք մը դարձած էին իրարու վտխադարձաբար, պէտք մը որ վարժութեան նուիրագործումը ստացաւ հետզհետէ, մինչև որ հաղիւ երկու երեք ամիս անցած՝ Նինէդ զգաց թէ կը սիրէր իր բարեկամը:

Ան դիտէր որ Սարգիս գրեթէ երկու հարուր Փրանք կը ստանար իր հօրմէն ամսէ ա-

միս, և ինքզինքին չէր ներեր այդ համեստ գումարին վրայ դուրսն շահագործում մը ընել։ Իր պզտիկ խնայողութիւնները՝ որոնց կը միանար Լիօնէն ղրկուած ամսական յիսուն ֆրանքի եկամուտը՝ շատ ու շատ կը բաւէին իրեն պահ մը դիմանալու որ չի հարկադրուի այլեւս իր խոնջ մարմինը պուլվառները քաշ-կըռտելու։

Արդէն իր սէրը կը մաքրէր տակաւ իր հոգին, և Սարգիսին վրայ մտածած ատենը կ'ամօնար պարզապէս յիշելով որ փողոցի կինը եղած էր դեռ երէկ։

Հեռացած էր այդ ապականուած շրջանակէն, և՛ իր տարփածուին մօտ ըլլալու համար՝ Գարթիէ Լաթէնի կողմերը սենեակ մը վարձած էր։ Վերադարձած էր լաւագոյն կեանքի մը, փակագիծի մէջ առնելով ցոփութեանց թուականը՝ զոր մօռնալու համար յաճախ կարմրած երեսները կը ծածկէր ձեռքերով և հոգիէն կուլար, խեղճ հոմանունին։

— Փոյթ չէ որ դուն ալ խաբես ու լքանես իս, կը հեծկտար զեղումի բոպէներուն, աչքս ամէն բան առած եմ. կեանքը շատ գէշ ճանչցայ. մեղք։ Այս անգամ մարապետանոց մը պիտի մտնեմ, ուրիշ անկեւտուն մը, հոն, ուր՝ յաճախ անլուր մեղքեր կը գործուին՝ մութին մէջ աւելի աններելի, և հոն պիտի մաքառիմ կեղծիքներուն դէմ, պիղծ կեանքիս սրբացումովը պիտի յաջողիմ թանձր քօղերը վեր առնելու՝ լոյսին, ու Պուրժէի մը ոտքը պիտի երթամ իյնամ՝ որ ինէ լսէ բուն ինկած կիներու իրական պատմութիւնները՝ զոր դիրքերը լուծեամք կը կաշառեն։

Բայց այս «ազատ միութիւնը» երկար տեւելու սահմանուած չէր։ Սարգիսի տկարութիւնը—նախ ուշադրութիւնէ վրիպած—աւելի լուրջ հանգամանք մը առած էր աշնան սկիզբները։ Իր դատախօս—բժիշկը թոքախտի սկզբնաւորութիւն մը հաստատած էր, և վճռապէս խորհուրդ տուած էր անոր դադրեցնել իր դասերը և ձմեռը անպատճառ Ալձերիա կամ Եգիպտոս անցընել։

Մահուան առջեւ դողալու չափ խախուռ նկարագիր մը չունէր Սարգիս. առաջին դուր-

ծը եղաւ տխուր իրողութիւնը իմացնել իր մօրեղբօր, ու յետոյ գոցէն խօսքը բացաւ Նինէգին։

— Այս հազը իս մտաւանջ կ'ընէ, գիտես Նինիս. կը մտածեմ օգտփութիւն մը ընել, բժիշկս ալ համամիտ է ինծի. ի՞նչ կ'ըսես, հարցուց շուարած։

Նինէգը կաս կարմիր եղաւ. բնաւ չէր սպասեր. եւ յետոյ պարզ հարգութիւն մը չէր ատ որուն վարժուած էր ինք։ Նախ խաղ մը կամ պատրուակ մը կարծեց, բայց քիչ քիչ համոզուեցաւ կոկլութեան։

— Ի՞նչ ըսեմ, քանի որ առողջութիւնդ ատանկ կը պահանջէ. բայց կը վախճամ որ իս մօռնաս, հէ՛, եթէ ուշ մնաս, մտածէ՛ իմ վիճակս։ Ես առանց քեզի ա՛լ չեմ կրնար ապրիլ, փոյթ չէ որ սպասուհիդ ըլլամ։ Դուն բարի աղայ մըն ես, իս չես խաբեր, այնպէս չէ՛ . . . :

Ու Նինէգը, քրանած ճակտին վրայէն մաշկին թելերը վեր նետելէն, կը խաղար անոր մօրուքին հետ, շուրթերը անոր աչքերուն վրան կը պտտցնէր, և արցունքներով կը լուար անոր տաքցած այտերը ու վիղը։

— Չէ՛, պուպրիկս, ձմրան սաստիկ եղանակը միայն անցընեմ ու նորէն քովդ պիտի վերադառնամ. դուն ինծի համար շատ սքանչելի ընկերուհի մը եղար. քու յիշատակովդ պիտի ամրանամ, և աւելի առողջ՝ օր մը կրիին քուկդ ըլլալու յոյսով պիտի օրուիմ քենէ հեռու։

Որոշուեցաւ որ Սարգիս իր հօրը պատասխանը տաճառուն պէս Գահիրէ մեկնի, ուր բարեկամներ ունէր, և Նինէգը ալ Լիօն իր ծնողքին մօտ վերադառնայ։

Բաժանումը չուշացաւ և շատ սրտածմլիկ եղաւ։

★ ★

Փետրուարը վրայ հասած էր, և Սարգիս իր ցանցառ ու համառօտ նամակներուն մէջ ո՛չ իր հիւանդութեան մասին, և ո՛չ ալ իր մօտալուտ վերադարձին վրայօք որոշ բան մը չէր գրեր Նինէգին. խուսափողական էին յաւատ իր խօսքերը՝ իրենց չի հասկցուած վերապահումին մէջ, և իր սիրուհիին համար աւելի քան երբեք վրդովիչ ու կասկածելի։

Արդարեւ Նինէդ կը մտահոգէր, կը յուսահատէր տարտամ իրողութեանց թիւր տարալուծումին մէջ. կամաց կամաց պատրուակ մը կը կարծէր նշմարել Սարգիսին հեռացումին մէջ. հետաքրքրութիւնը կը լափէր ինքը, երկար ժամեր կ'անցընէր «արդեօք» ներու և «ինչու» ներու մանուածապատին մէջ. և յետոյ, ու մանաւանդ, կը սիրէր և իր պաշտելին տեսնելու կարօտին ա'լ չէր կրնար սովակ:

Ինչ ըրաւ չըրաւ, ընտանեկան նկատումները և նիւթական հաշիւները ծայրը ծայրին բերաւ, և յաջողեցաւ. այնպէս մը կարգադրել որ ինք ևս Սարգիսին ետեւէն Գահիրէ երթայ:

— Հայրիկ, Եգիպտոս հարուստ երկիր է, թերեւս հոն «պատուաւոր դործ» մը գտնեմ, ըսաւ հեգնոտ քմծիծաղով մը:

Իր ազատամուլ ու սանձարձակ բնոյթին համար այս ճամբորդութիւնը ոչ միայն չէր խրոչեցներ ինքը, այլ նպատակի մը վաղեւու ինքնազոհութիւնը կուտար իրեն:

Գահիրէ հասնելուն՝ չիտակ ինծի եկաւ, որովհետեւ Սարգիս իմ հասցէս տուած էր իր թղթակցութեանց համար:

Շնորհալից աղջիկ մը, մանրկէկ, բայց աշխոյժ, առջի վայրկեանէն իսկ համակրելի՝ իր խանդավառ խօսակցութեամբ:

Կը փափաքէր չիտակ բարեկամին մօտ փութալ. ընդդիմացայ առանց բժիշկին հաւանութեան այդ բանը ընել:

— Բայց խորհեցէք որ սիրոյ ուխտաւոր մըն եմ, ըսաւ՝ վարանումէս չփոթ, և քիչ մը նեղսրտած:

— Իրաւունք ունիք, Օրիորդ, բայց Սարգիս բաւական տկարացած է, և կը վախնամ որ այս հաճելի անակնկալը չտրադանց յուզէ ինքը մէկէն ի մէկ:

Համակերպեցաւ Տօքթ. Մ. ին գացինք, մէկտեղ: Իրողութիւնը պարզեցի և որոշուեցաւ որ նախ ես ինքս երթամ հիւանդին մօտ և պատրաստեմ զինքը այս ուրախաւիթ հանդիպումին:

Տեսնելու բան էր խեղճ աղջկան սիրտ-հատումը. հարցումներով նեղը կը դնէր բըժիշկը: Ինչ ղմայելի էր ան իր ցաւին մէջ,

և որքա՛ն միամիտ: Երկուքս ալ խորապէս զգածուած էինք իր արցունքներէն՝ որոնց մէջէն իր մաքուր հոգին թափանցիկ կը բխեր զանաւար. հոգիները ուրիշ կեանք մը ունին, և անոնք երբեմն անաղարտ կը մնան տիղմին մէջ՝ ինչպէս աղամանդ մը:

Իրիկուան դէմ արդէն երկու սիրահարները կը գիրկընդխառնուէին երկա՛ր ողջագուրումի մը մէջ. քիչ մը լացինք, ու յետոյ դիտեցի որ Սարգիս կը ճաճանչէր բերկրանքէն:

— Ա՛լ պիտի աղէկնամ Նինէդիս մօտ, կը մրմնջէր իր սիրուհիին մատնիներուն հետ խաղալով՝ ինչպէս կը սիրէր ըսել:

— Ուրքա՛ն աւրուեր է, կը փափար Նինէդ մէկուսի, պզտիկ գլուխը ինծի դարձնելով, և արցունքը հաղիւ զսպելով:

Ինչ հոգեցունց տեսարան:

* *

Նինէդ քանի մը շաբաթ բանսիօն մը մընալէ վերջ, թէ՛ խնայողութեան համար և թէ՛ միշտ իրարու հետ ըլլալու համար, համոզեց իր սիրահարը և պզտիկ աբարքման մը վարձեց Փակալլայի կողմերը: Իր նուրբ ճաշկով կահաւորեց երկու փոքրիկ սենեակները, քիչով շատ բան ցոյց տալով: Պէտքերի սպասաւոր մըն ալ բռնեց:

Ինք կերթար ամէն առտու բաղարը, ինք կարգի կը դնէր կերակուրները, ինք էր հիւանդապահը, ինք էր ամէն բան: Ժիր, անվըհատ, ժպտադէմ, կ'երթար կու գար, կը հասնէր ամէն աշխատութեանց, բոլորովին գոհ՝ իր պարտքը լիուլի կատարելուն:

Սարգիս կը սիրէր, կէսօրին մօտ, երբ արեւը բաւական բարձրացած էր, էջպէքիէի պարտէզը երթալ և աւաղանին մօտ լաթանիայի մը ներքեւ նստած՝ կարապներուն սիրուն խաղերը դիտել, ամէն անգամ որ կարդալէն յոգնէր: Իսկ արեւմուտքէն առաջ, յաճախ կէզիրէի պարտէզը՝ կ'երթար և կը նախընտրէր պամպուկներու քովիկը մխրճուիլ և կամ շոճիներու հոտաւէտ շուքին մէջ նըստիլ: Նինէդ միշտ իրեն կ'ընկերանար, և կը ջանար հաճելի ընել հիւանդին ժամերը՝ զրաւրթ խօսքերով և վէպերու ընթերցումով:

Բայց, աւա՛ղ, Սարգիսին վիճակը օր օրի

աւելի կը վատթարանար։ Ախտը սպառնա-
կան հանգամանք մը կը սկսէր առնել՝ հա-
կառակ օղերուն տաքնալուն։ Ջերմին առաջ-
քը չէր առնուեր և ակորժակը բոլորովին
գոցուած էր։ Նինէդ չէր նշմարեր այս ան-
կումը, առօրեայ վարժութիւնը և սիրոյն չա-
փազանցութիւնը կուրցուցած ըլլալով իր հե-
ռատեսութիւնը։

Բժիշկը, կոահելով թէ սիրային զեղծում-
ները ևս մեծ դեր մը կը խաղան, հասկցուց
Նինէդին թէ մանաւանդ ինք չափ խելօք
ըլլալու էր...

Ներտասարդ էին երկուքն ալ և կը սի-
րէին իրար, ու բժշկական այս ցուրտ և սի-
նիկ պատուէրը անգործադրելի կը մնար, նոյն
խիկ շատ անգամ Նինէդին համար։

Այսպէսով վտանգը կը խուճապէր, և եր-
կուքն ալ՝ հեշտանքէն գինովցած՝ չէին անդ-
րադառնար այդ բանին վրայ։ Ոչ իսկ վա-
րակուսին դէմ Նինէդ կը զգուշանար. իր սի-
րելուն ճակատագրին կը հետեւէր անըմբատ
անձնագրութեամբ։

— Դեռ չի մեռած, այս անուշ վայրկեան-
ներուն յաւիտենականութիւնը ապրինք, կ'ը-
սէին իրարու։

Գիշեր մը, մայիսի վերջերը, երկու սի-
րահարները՝ բոլորովին հրաբորբոք ու խե-
լացնոր՝ կանուխ անկողին մտան։

Հոն գիրկ գիրկի ըմբռնանցին համբոյր-
ներու և գգուանքներու սպառիչ հեշտու-
թիւնները։ Ամէն բան մոռցած էին. կը սի-
րէին իրար՝ մեռնելու չափ։

Նրջանիկ էր ժամը...։ Իրարու պլլուած
էին՝ երբ յանկարծ արեան հեղեղ մը պոռթ-
կաց խեղճ հիւանդին մաշած կուրծքէն և
կարմիր ներկեց Նինէդին ժանեկաղարդ ձեր-
մակ չալիկը, հոլանի լանջը, թափուած մա-
զերը խարտիչադեղ։

Շուարեցան, վախցան երկուքն ալ։

Նինէդ վար ցատկեց. ինչ ընելը չէր գի-
տեր, գնաց եկաւ, թքամանը բերաւ։ Ար-
ցունքը աչքերուն մէջ և խօսքը չրթունք-
ներուն վրայ սառեցան։

Սարգիսին աչքերը դեմի դեղին էին և
ակնակապիճներէն կարծես դուրս կը թափէին։
Սյաերը, մոխրագոյն, կ'ոսկրանային, և

ռունքերը ուռած կը բացուէին. ամբողջ մոր-
թը թափանցիկ էր։ Սաստիկ հեւք մը, դըժ-
ուարին, անհամաչափ, որ արհաւիրքով կը
լեցնէր սենեակին լուսթիւնը։ Արիւնը եր-
բմն երբեմն դուրս կը ժայթքէր տակաւին,
և ժահրոտ խուխը միշտ կը վազէր թուչն
վար։

Նինէդ սպասաւորը բժիշկին վաղցուցած
էր։

Նրբոր իր սիրահարին քով վերադարձաւ,
բոլորովին ինքզինքէն ելած, հեւքը այլեւս
կեցած էր, սոսկաց ու զամուած մնաց ան-
կողինէն քանի մը քայլ անդին։ Կերիտոնին
վրայի մո՞ր իր տխուր նշուանքը կ'ոգեւորէր
Սարգիսին ուրուատեսիլ դէմքին վրայ։

Նինէդ, սարսափահար, բոսիկ մատու-
ներուն ծայրը կոխելէն, մօտեցաւ անկողինին.
գունատ, ու դողդալէն, վեր վերցուց իր
սիրահարին սառ գլուխը, և դիակը ինկաւ
իր թեւերուն վրայ...

ՎԱՀՆՆ ՄԱԼԷՋԵԱՆ

ՎԱՂՈՒԱՆ ՊԱՊԸ

ՈՂ ՊԻՏԻ ՅԱՋՈՐԳԷ ԼԷՈՆ ԺԳԻ

Լէոն ԺԳ. Պապին մահուան առթիւ կա-
րեւոր խնդիր մը կը դառնայ թէ ո՞վ պիտի
ըլլայ վաղուան Պապը։ Իրաւ է որ Քոնկլավին
ընտրութիւնը միայն պիտի վճռէ ատիկա,
բայց վերջապէս պապական պատմութեան
մէջ մէկէ աւելի առիթներ եղած են՝ որոնց
մէջ նախապէս գիտցուած է թէ ո՞վ պիտի
յաջորդէ մեռնող Պապին։ Եղած են նոյն իսկ
Պապեր՝ որոնք իրենց վերջին շունչը չաւան-
դած՝ նշանակած են այն Կարտինալը, զոր
ամէնէն արժանաւորը կը նկատեն իրենց յա-
ջորդելու համար։ Կարտինալներ կան՝ որոնք
իրենց ասպարէզին, բնդունակութեանց, քա-
ղաքական նշանակութեան և անձնական յատ-
կութիւններուն բերմունքով միշտ հաւանա-
կանութիւն կ'ունենան Պապ ընտրուելու,
կարտինալներուն աչքին իբր ընտրելի ներ-
կայանալու՝ տակաւին Քոնկլավը չգումար-
ւած։

Լէոն ԺԳ.ի յաջորդութեան համար ալ պակաս չեն եղած այդ կարգի կարտինալներ, որոնք երկար ատենէ ի վեր իբր Պապական զահուն ժառանգորդները կը նկատուին: Կ'ըսեն թէ այս անգամուան ընտրութիւնը շատ դժուար չպիտի ըլլայ՝ Կորտինալներուն համար, որովհետեւ հաղիւ. հինգ կամ վեց ընտրելիներու շուրջը պիտի դառնայ: Արդէն իսկ կը յիշատակուի ժիթօլամօ-Մարիա Կոթրի, Սվամբա, Վանուխէլլի, Ռամբոլլա, Սարթօ, Օրէկլիա, Ալլիարտի և Քաբաչէլաթրօ կարտինալները, որոնցմէ իւրաքանչիւրը կրնա՞ Պապ ընտրուիլ յառաջիկայ ընտրութեան միջոցին: Կ'արժէ ուրեմն որ անոնցմէ գլխաւորները ներկայացնենք հոս հակիրճ ուրուագիծերով միայն, որովհետեւ անկարելի է կարտինալներու կենսագրութիւնը ընել: Անոնց մեծագոյն մասը մութի մէջ կ'ապրի միշտ, հեռու ամէն աղմուկէ, և իր գործերը վարագործուած կը մնան: Վատիկան միայն դիտէ թէ ի՞նչ կ'ընեն անոնք:

Կարտինալ Ռամբոլլա 1843 օգոստոս 17ին ծնած է Բօլիթծի մէջ (Սիկիլիա): Կարտինալ եղած է 1887ին և անմիջապէս պաշտօնի անցած է Վատիկանի քաղաքական գործերու վարչութեան մէջ: Յետոյ, իբր արտաքին գործոց տեսուչ յաջորդած է Ժաքօպլինի կարտինալին: Այդ թուականէն ի վեր չէ բաժնուած Վատիկանէն: Ռամբոլլա Փրանսասէր քաղաքականութեան մը հետեւած է, և միշտ մեծ դեր մը խաղացած է պապական գործառնութեանց մէջ: Ներքնապէս անտարբեր չէ մնացած պապական խոյրին համար: Երկար ատենէ ի վեր կ'աշխատի Լէոն ԺԳ.ի յաջորդութիւնը ձեռք ձգելու, և այդ նպատակով որչա՞փ կարտինալներէն՝ այնչափ մըն ալ զլուանադէտներէ բաղկացած ստուար կուսակցութիւն մը գոյացուցած է իրեն ի նպաստ: Եւրոպական շատ մը դահլիճներ իրենց Բեռսօն կուսիքիսիւման Ռամբոլլան պիտի ընեն, այսինքն անոր Պապ ընտրուելուն համար բաղձանք պիտի յայտնեն: Ասիկա սակայն պատճառ մը չէ որ խաղաղի կարտինալները, — որոնք մեծամասնութիւն կը կազմեն, — հակակրօթիւն ցոյց չտան իրեն նկատմամբ:

Պէտք չէ մոռնալ նաև սա կէտը թէ Վատիկանի արտաքին գործերու տեսուչները երբեք Պապ չեն եղած: Ամէն պարագայի մէջ, կարտինալ Ռամբոլլայի արտակարգ հարամտութիւնն ու մեծ ազդեցութիւնը կրնան կարեւոր դեր մը խաղալ յառաջիկայ ընտրութեան միջոցին, և նոյն իսկ կորզել հակակիր կարտինալներէ շատերուն քուէն:

* * * Նոյնչափ և աւելի հաւանական է նաև կարտինալ Կոթրիի ընտրութիւնը: Ծնած է 1834ին՝ Ճենովայի մէջ և Ռամբոլլայինին բոլորովին հակառակ խառնուածք մը ունի: Երիտասարդութեան օրերուն մտած է բուսիկ ոտքով շրջող Կարմնեաններու միաբանութեան մէջ, որուն մեծաւորը եղած է 1880ին, և 10 տարուան որոշեալ ժամանակամիջոցէն վերջ, Լէոն ԺԳ.ի մէկ բացառիկ կարգադրութեամբ վերընտրուած է 1890ին: Կոթրի՝ ուսուցչական շատ փայլուն ասպարէզ մը ունեցած է: Գրեթէ ամբողջ կեանքը դաստիարակութեան նուիրած է, յաջորդաբար ուսուցանելով փիլիսոփայութիւն, աստուածաբանութիւն, մաթեմատիք և գիտութիւններ: 1892ին, Լէոն ԺԳ. զինքը Պրազիլիա ղրկած է շատ դժուարին պաշտօնով մը, զոր յաջողապէս ղրուի հանելով վարձատրուած է կարտինալի գլխարկով: Ամբողջ լատին կղերը կը յարգէ զինքը, որչա՞փ իր հմտութեան՝ այնչափ մըն ալ անցուցած մաքուր կեանքին համար: Շատ համեստ է, և հաւանական է որ մերժէ Լէոն ԺԳ.ի յաջորդութիւնը:

* * * Իրմէ ետքը պէտք է յիշել կարտինալ Օրէկլիան, որ 1828ին ծնած ըլլալով, երիցադոյնն է կարտինալներուն, և կը վարէ տեղապահութեան պաշտօնը, — ինքնին ամէնէն բարձր պաշտօններէն մէկը՝ Վատիկանի վարչութեան մէջ: Երբ Պապական Աթոռը թափուր մնայ, ինք է որ կը վարէ Վատիկանի գործերը. դարձեալ ինք կը նախագահէ առաջին Քոնկլավին: Եթէ մէկ անգամով քուէարկութիւնը չյաջողի, յաջորդ Քոնկլավներուն կը նախագահեն միւս կարտինալները, տարիքի երիցութեան կարգով: Այս պայմաններուն չնորհիւ, կարտինալ Օրէկլիա շատ մեծ ազդեցութիւն մը ձեռք բերած է, իր հակառակութիւնը Լէոն ԺԳ.ի հետ շատ ծա-

նօթ է, և կ'ըսեն թէ Պապը՝ աւելի այդ հակառակութեան վերջ տալու համար է որ շարունակ բարձրացուցած է Օրէկլիայի պաշտօնները: Այս վերջինը սակայն անդդուելի մընացած է միշտ, և առիթը ներկայացած ատեն չէ վարանած իր հակառակութիւնը ըզգացնելու: Կղերին ստուար մասը հակակիր է իրեն, բացի ժէզուիթներէն որոնց քով ուսած է, և որոնց մէջ իր եղբայրները բարձր պաշտօններ կը վարեն:

Սարթօ և Վանութէլլի կարտինալները ոչ նուազ հաւանականութիւն ունին Պապ ընտրուելու: Առաջինը, Պատրիարք Վենետիկի, շատ համեստ եկեղեցական մըն է, սիրուած աղքատներէն՝ որոնց կու տայ միշտ ունեցածը, և յաճախ ունեցածէն ալ աւելին: Երկրորդը, Հռոմայեցի կղերականի տիպարն է, աշխարհիկ, պերճ և ծայրայեղօրէն խնամատար իր անձին համար: Իր արդուզարդն ու բնակարանին ճոխութիւնը առակի կարգ անցած են Հռոմայ մէջ: Յաջորդարար պաշտօնավարած է Միլենիսի, Պրիւսէլի և Վիեննայի մէջ, ու շատ կարող դիւանագէտի համբաւ մը չահած: Իր Պրիւսէլ գտնուած միջոցին էր որ Պէլժ ազատական կուսակցութիւնը յարաբերութիւնները խզեց Վատիկանի հետ, ասկէ 25 տարի առաջ: Վանութէլլի յայտնի ֆրանսաւորաց մըն է, և թերեւս այդ պատճառաւ շատ սիրելի դարձած է գերման կաթոլիկներուն՝ որոնք իր ընտրութեան պիտի աշխատին: Եւ արդէն՝ Մաղաքիայի համբաւաւոր գուշակութիւնը որ այնչափ ժողովրդական դարձած է Իտալիոյ մէջ, զինքը կը նշանակէ իբր յաջորդ Լէոն Ժ. Գ.:

Քանի որ առիթը ներկայացաւ, ըսենք թէ ո՛վ է այդ Մաղաքիան, որ ո՛ր և է առնչութիւն չունի Աստուածաշունչի տասերկու «պղտիկ մարգարէ»ներուն հետ: Իւլանտայի Արմազ քաղքին եպիսկոպոսն է ասիկա, և ապրած է 1100ի ատենները: Պապերուն և Պապական իշխանութեան նկատմամբ իր բրած գուշակութիւնները, սակայն, հրատարակուած են Ժ. Զ. դարուն: Այդ գուշակութիւնները կը բաղկանան լատիներէն 112 ասութիւններէ որոնցմէ իւրօքանչիւրը կը պատկանի ո՛ր եւ է Պապի մը կամ հակապապի մը, սկսեալ Սէ-

լէսթէն Բ. ի օրէն (1143) մինչեւ ո՛ր և է «Բէդրուս Ռօմանուս» մը, որ իր գուշակութեանց համեմատ վերջին Պապը պիտի ըլլայ, յայտնի չէ թէ ո՛ր թուականին: Այդ գուշակութիւնները, ասկէ երկու տարի առաջ յատուկ հատորով մը հրատարակուած և բացատրուած են արքա Մէթուի կողմէ: Անոր մէջ՝ Լէոն Ժ. Գ. նշանակուած է «Lumen in coela» (երկինքին մէջ լոյս) առածով: Եւ պէտք չէ մոռնալ որ Բէէչի ընտանիքին (Լէոն Ժ. Գ. ընտանիքին) զինանշաններուն մէջ գիսաւոր մըն ալ գոյութիւն ունի: Մաղաքիա եպիսկոպոսին գուշակութիւնները արդէն ասոր նմանող ուրիշ շատ մը ղուգադիպութեանց ալ առարկայ դարձած են: Պիոս Զ. Պապը՝ որ Վիեննա ճամբորդեց՝ Շօղէֆ Բ. կայսեր ետ առնել տալու համար այն որոշումը, որով Աւստրիոյ մէջ գտնուած միաբանութիւնները կը ջնջուէին, այդ գուշակութեանց մէջ նշանակուած է «Peregrinus apostolicus» ասութեամբ որ «Առաքելական ուխտաւոր» կը նշանակէ: Յիշենք հոս թէ Պիոս Զ. միակ Պապն է՝ որ Հռոմէն դուրս ելած ըլլայ երբեք: Պիոս Թ. այդ գուշակութեանց մէջ նշանակուած էր «Crux de Cruce» ասութեամբ, որ մօտաւորապէս «խաչով խաչուած» կը նշանակէ: Եւ ճիշդ այդպէս խաչ մը կար Պիոս Թ. ի ընտանիքին զինանշաններուն մէջ:

Մաղաքիա՝ Լէոն Ժ. Գ. ի անսխալական յաջորդին համար նշանակած է «Ignis ardens» ասութիւնը որ «բոցաւոր կրակ կը նշանակէ: Եւ արդի կարտինալներուն մէջ կան երեք հատ որոնց կը պատշաճի այդ ասութիւնը. — կարտինալ Կօթթին՝ որուն զինանշաններուն մէջ վառուած ջահ մը կայ. — Վանութէլլին որուն մականունը, Սէրաֆէն, «այրող» կը նշանակէ: Վերջապէս Տօմէնիքօ Սվամբա կարտինալը՝ որուն անունը «բոց» կը նշանակէ և որուն զինանշանները կը կրեն արեւի պատկեր մը:

Կարտինալ Սվամբա ալ ընտրուելու մեծ հաւանականութիւններ ունի: Մնած է 1851 յունիս 13ին՝ Մօնթեկրանարոյի մէջ, և հոգեւոր սնօրէնն է Բրոքականտայի դօլէճին: Օրէնքի հմուտ ըլլալուն համար իրա-

ւագէտ-խորհրդականի պաշտօնը իրեն տրուած է: Կարտինալ եղած է 1894ին, և անկէ ի վեր հաւանական ընտրելի մը կը նկատուի: Իր ընտրութեան համար, սակայն, իբր գլխաւոր արդելք պէտք է յիշատակել երիտասարդ ըլլալը: Որովհետեւ կարտինալները երբեք չեն սիրած երկար ժամանակ ապրելու տրամադիր երեւցող ընտրելիները:

* * Այս շարքին մէջ կ'արժէ յիշատակել նաև ուրիշ երեք կարտինալներ ալ. — Նախ Ալֆօնսօ Գաբէշէլաթրօն որ 1824ին Մարտիի մէջ ծնած ըլլալով, մասնաւոր համակրութիւն մը կը վայելէ ֆրանսական կղերին կողմէ: Ծագումը Նաբօլիէն է, և Մարկէրիթա Մայր Թագուհին խոստովանահայրը ըլլալով, շատ հաւանական է որ Իտալիոյ արքունիքին ընտրելին դառնայ:

Երկրորդն է կարտինալ Ալլիարտի որ իր կարգին քրիստոնական կղերին համակրութիւնը կը վայելէ: Նախապէս անդամակցած է Բօքականտային և Պօմպէյ ղրկուած է Պապական Նուիրակութիւն մը հաստատելու համար: Հնդկաստանէն վերադարձած է մարմնով շատ տկարացած թէեւ, բայց մեծ ալ համակրութիւններ չհանդիմանալով մէջ ալ միշտ մեծ նշանակութիւն մը ունեցած է, մասնաւոր իբր անդամ եկեղեցական արտասովոր գործերու ժողովին, և քանիցս Լէոն Ժ. Ի խորհրդականը եղած է: Ինք է որ 1896ին, Ռուսիոյ Նիքոլա Զարին Թագադրութեան միջոցին Մոսկուա առաջնորդեց Պապական պատուիրակութիւնը, և այնչափ փայլուն ու նշանակելի հանգամանք մը տուաւ անոր:


Իսկ երրորդն է Մարիօ Մօզէնի կարտինալը, որ շատ տաղանդաւոր ու կարող դիւանագէտի համբաւ մը կը վայելէ: Յաջորդաբար վարած է Պրաղլիիոյ Նուիրակութեան քարտուղարի, Վիեննայի Նուիրակութեան, Հելսինկիի արքեպիսկոպոսութեան, Բէրլինի, Պօլիլիոյ, Էդուարթօրի և Շիլի արտասովոր դեսպանութեան պաշտօնները, և շատ մեծ ծառայութիւններ մատուցած է Հռոմի Աթոռին: Ատեն մը՝ Վատիկանի դիտարանին տնօրէն անուանուած է: Յետոյ, Վատիկանի մատակարար նշանակուած է անանկատեն մը ուր Հռոմի Աթոռը, կարգ մը շա-

հադիսութեանց պատճառաւ, ելմտական մեծ տաքնապի մը մատնուած էր: Այդ դժուարին գործը յաջողած է գլուխ հանել, կանոնաւորած է Վատիկանի ելեւմուտքը, և իբր վարձատրութիւն ընդունած է կարտինալի գլխարկը: Ժէզուիթներն ալ շատ հաշտ աչքով կը նային իրեն, ինչ որ արդէն պղտիկ դեր մը չի խաղար Պապական ընտրութեանց մէջ:

X

ՃԱԿԱՏԱԳՐԱՅԻՆ ՏՈՒՄՆԵՐ

ՈՐ ՕՐՆԵՆՍ ԶԱՅՆՈՍԻՒ



Թաղէոս և Բարթողիմէոս երկու եղբայրներ էին: Գաւառացի համեստ ու բարեպաշտ երիտասարդներ: Մեծը՝ Բարթողիմէոս պղտիկ ու նախնական լուսանկարչատուն մը կը բանեցնէր, գրավածառի իր կրպակին խորը, գաւառային այն անկիւնը ուր մէկ քանի արհեստներ միանդամայն ընելը, սովորութեան մը աւելի պէտք մըն էր, քանի որ շատ անգամ մէկ հատը փոր չի կշտացներ: Թաղէոս ալ անոր քովը լուսանկարչութեան իր առաջին փորձերն էր ըրեր: Մայր չունէին արդէն, հօրերնուն ալ մեռնելէն ետքը Թաղէոս իրեն կամ պղտիկ բաժինը առնելով չիտակ չունչը Մարսէյլ առաւ: Չէր գիտեր ուր երթալիքը, ոչ ալ ինչ ընելիքը: Գրպանն ալ շատ բան չէր մնացեր արդէն հոն հասնելէն ետքը, երբ տեղին քահանային յանձնարարութիւնովը լուսանկարիչի մը քով մտնալ յաջողեցաւ: Քանի մը տարիներ կեցաւ հոն, Ֆրանսերէնը կատարելագործեց, և լուսանկարչական կատարեալ հմտութիւն մը ամբարելէ դատ, քիչ մըն ալ դրամ աւելցուց, չնորհիւ այն խնայող ու ժուժկալ կենցաղին որ հրաշքներ կը գործէ եւ որ դաւառացիներուն յատուկ է:

Գրեց եղբորը: Անոր ալ գործերը յաջող չէին երթար արդէն, որ ծախեց, ծախծխեց ամէն բան և շողենաւ նստաւ: Իրենց ծննդավայրին մէջ ոչինչ ունէին դիւրեք կապող: Բարթողիմէոս աղէկ անգլիերէն գիտէր, տե-

ղին բողոքականներու գլխերային վարժարանը
յաճախած ըլլալով ատենով: Երբոր Մարտէյլ
հասաւ, երկու եղբայր խորհուրդ ըրին՝ կոյս
երկիր մը երթալու համար, չուզելով հաս-
տատուիլ Ֆրանսա, ուր թէ՛ կեանքի պայ-
քարը սաստիկ էր ու դառն և թէ՛ Տրէյֆիւսի
խնդիրին պատճառով երկիրը՝ տակնուվրայ,
բորբոքած, օտարատեսց: Որոշեցին Թրանս-
վալ երթալ իրենց գլխուն լուսանկարչատուն
բանալու համար: Ոսկիի հանքերը դեռ նոր
գտնուած էին և մեծ բաղմունքին մը կը
խուժէր հոն, փութած ոսկիները ափովին
քաղելու յոյսով: Քիչ մը ատեն նեղութիւն
ու դժուարութիւն քաշեցին, բայց յաջողու-
թիւնը չուշացաւ դալու: Երկիրը հարուստ էր,
վաստակը՝ առատ, գործերը՝ վալյուն: Բայց
օդը երկուքին ալ եկած չէր և մասնաւորա-
պէս Բարթոլոմէոս, նուազ առոյգը մէջեր-
նին, որ Թադէոսի պէս վարժուած ալ չէր
քանի մը տարիէ ի վեր Եւրոպեան կեանքի
պայմաններուն, չի դիմացաւ և տեղական
հիւանդութենէ մը զգեանուած, մեռաւ:

Թադէոս թէ՛ անօղնական մնաց, թէ՛ վըշ-
տահար: Եւ միս մինակ, այնչափ գործերու
հանելու անկարող, ինք ալ տկար արդէն,
չուարած մնացեր էր, երբ Թրանսվալի պա-
տերաղմը պայթեցաւ: Գոցեց լուսանկարչա-
տունը, քանի մը կալուածները ու գոյքերը
ծանօթ բարեկամներու խնամքին յանձնեց և
Քէյրթաուն մեկնեցաւ: Իր շահածին մէկ մեծ
մասը ոսկեհանքի արժեթուղթերու էր վերա-
ծած, որոնք պատերաղմէն ետքը իրենց ա-
հալին բարձրացումովը, մեծ հարստութիւն
մը սխտի շինէին իրեն: Բայց միայնութիւնը
ու եղբորը մահուան համար զգացած կսկիծը,
ա՛լ աւելի ծանր եկան իրեն անգործութեան
մէջ որ հետզհետէ աւելի կ'երկարաձգուէր ա-
նակնկալ պարագաներու բերումովը: Ինք որ
բոլոր անդլիացիներուն հետ յուսացեր էր մէկ
ամիս չանցած յաղթական վերադառնալ Եօ-
հաննէսպուրկ, իր գործին գլուխը:

Ամբողջ երկու տարի զամուած մնաց
Քէյրթաուն ափնորեայ վերադարձի յոյսերով
ու սխարանքներով օրօրուած ու աղքատ ա-
ռողջութիւնով մը կաշկանդուած: Ամէն օր
ուրիշ բան չէր կարդար, չէր իմանար, չէր

տեսնար, եթէ ոչ՝ պաշարում, ռմբակոծու-
թիւն, վիրաւոր, պլօքհաուզ, գերի, յար-
ձակում, խաքի, նահանջ, պարտութիւն,
լիտիթ, յաղթանակ, ձախողում, ծուղակ,
հիւանդ, կարմիր խաչ, ռազմամթերք, թըն-
դանօթ, դնտակ, զօրավար, camp de con-
centration, Պուլլըր, Տը Վէթ, Էւայն Էւ-
այն: Սիրտը կ'արիւնէր տեսնելով բոլոր այդ
դժբաղդութիւնները, սուգերը, որոնք անօ-
գուտ կերպով կը շարունակուէին առանց արդ-
իւնքի, առանց դադարի: Հոգին ելաւ ա՛լ,
պզտակով անընդհատ անձկութեան մը մէջ
և դառնութիւնը, յուսավրիպումը, վերջա-
պէս յանգեցան ողբալի մեղամաղձոտութեան
մը: Միեւնոյն ատեն, արդէն շատոնց սկսած էր
կամաց կամաց ծախել ունեցածները, օրուան
աժան գիներով, իր հիւանդի ու անգործի
ծախքերը գոցելու համար:

Պատերազմի ուժգնութիւնը մասամբ թու-
ցած էր ալ և Եօհաննէսպուրկի մէջ գործերը
մինչեւ մէկ աստիճան բացուած էին, բայց
Հարաւ. Ափրիկեան խիստ ձմեռն ալ մօտե-
նալու վրայ էր նորէն: Բժիշկները խորհուրդ
տուին Թադէոսի, քիչ մը ատենի համար Եւ-
րոպա վերադառնալ և տաք երկիր մը, մաս-
նաւորապէս Իտալիա կամ Սիկիլիա երթալ,
իր քայքայուած առողջութիւնը դարմանելու
համար, եթէ չէր ուզեր եղբորը քով երթալ:
Թադէոս մտիկ չըրաւ, ուղեց սպասել դեռ:
Հաշտութիւնը կնքուելու մօտ էր: Բայց իր
ուժերը մասնեցին զինքը և վերջապէս հար-
կադրուեցաւ շոգնաւ մտնալ: Ալ անկէջ վեր-
ջը արկածալից կեանք մը իրեն կը սպասէր:
Շիտակ Անգլիա եկաւ ուրտելի սառուցիկ
մշուշն վախշելով շուտով Մարտէյլ իջաւ,
անկից ալ Սիկիլիա անցաւ, ամէն անգ
մէկ քիչ կենալով: Միաքը պատերաղմին սոս-
կալի իրադարձութիւններովը, արհաւիրքնե-
րովը լեցուած էր: Ամէն ատեն վիրաւորներ,
բանակներ, այրուած ագարակներ կ'երազէր:
Չարաչար կը տանջուէր տենդէ մը և ուժգին
հաղէ մը որ կուրծքին տախտակները կը քա-
կէր:

Բալերմօ, Մեսինա, Սիրաքուզա մէյմէկ
քիչ պարտկելէ ետքը Քաթանիա անցաւ: Հոն
քիչ ատենի մէջ տաք ու առողջ կլիմայէն

բաւական օգտուած էր, երբ անօրինակ աղէտք մը եկաւ փլաւ ամբողջ Սիկիլիոյ գըլուխին: Հեղեղանման անձրեւներ ողողեցին ամբողջ կղզին, օրերով, շաբաթներով, և գիւղեր, քաղաքներ կործանեցան, ընտանիքներ քշուեցան հոսանքներուն հետ, տուններ տեղեր տախտակաւ եղան, հաղարարոր կորուստներ պատահեցան և ամբողջ կղզին սուգի մէջ թաթխուեցաւ: Անվերջ անձրեւներուն հետեւանքով, տիրող խոնաւութիւնը ու տենդը աւելի սաստկացուցին Թադէոսի վիճակը: Իր ջղային հիւանդութիւնը աւելի արաւայցաւ, այդչափ մահերու, աղէտքներու, աւերներու ի տես և օր մին ալ փախաւ հոնկէ, ինչպէս անտենով փախած էր պատերազմի վայրէն, մղձաւանջով ու բանդագուշանքներով լեցուած: Եւ ճիշդ ատենն էր, ինչու որ իր երթալէն քիչ ետքը նոր ողողումներ պատահեցան իր գտնուած տեղն ալ ուր հաւանօրէն ինք խղճուողներուն մէջը ըլլար այս անդամ:

Դիպուածը զինքը այս անգամ Նափօլի նետեց, ուր ինքզինքը միջալուգային հիւանդանոցը փոխադրել տուաւ: Այդ հիւանդանոցը, Վիա Թաճճաի բարձունքին վրայ սիրուն վիլլա մըն է, որուն հարաւի կողմը, ուր էր Թադէոսի սենեակը, ծովուն վրայ, անմասն տեսարան մը ունի: Կանանչ պարտէզներու, լեռնալէններու, գիւղերու, ամարանոցներու բոլորակ շարք մը, դալինիէ պսակ մը կը դառնայ անմահ ծովածոցին շուրջը, որուն ծայրը, ծոյլ մարդու մը պէս, Քափրի կը փայտի անհոգ, արեւուն տակ, կրնակը անհունութեան տուած: Ասդին Վէսուվ սպառնազին, կը կարկառի հանդարտ, արհամարհոտ գաղանի մը պէս:

Մէկ, երկու ամիս այդ չքնաղ կլիմային մէջ, նարնջենիներու մեղկ հովանիներուն տակ, Թադէոս պարտուոց ջղադրդիւ իր երազկոտութիւնը և ինքզինքը բաւական կաղաւթուած գգալու վրայ էր: Դիշեր մըն ալ ստկուածով արթնցաւ խուլ որոտումի մը ձայնէն որ երկինք գետինք կը սարսէր: Սենեակը լոյսերու մէջ կը լողար: Կը զգար որ սիրտը անհուն վախի մը մէջ կը տրոփէր, կը տրորուէր: Դողալով մօտեցաւ պատուհանին

ուր չի տեսաւ խի տեսարանին մեծվայելչութիւնը, այնչափ համակուած էր գերեզմանային սարսուռով մը: Վէսուվ արիւն կը փայէր: Ատրաշէկ զանգուածներ կը պոթկային դուրս, դէպ ի երկինք որ կը պատուէր, կ'այրէր, կը փլէր և կրակէ գետեր կը սողային լերան կողերն ի վար մինչև ծով որ հրաշէկ կոհակներով կը թանձրանար, կը կարմրէր: Բուռն պայթիւններ, ցնցող գետնաշարժներ, ամենի մանջիւններ, ամէն վայրկեան իրարու կը յաջորդէին:

Ութ օր խենդ կարեցաւ Թադէոս, իր արդէն հիւանդ ջիղերը չէ՛, դիմանալու կարող չէին ալ: Պատերազմ, ողողում, հրարուխ կը պաշարէին զայն ու խեղացնոր կ'ընէին: Մեղամաղձոտութիւնը հալածուելու հիւանդութեան փոխուեցաւ և բփշկը՝ մտահոգ, միւս կողմը մութ ու գոց սենեակ մը փոխադրել տուաւ զայն: Ունեցածը չունեցածը ծախած էր ալ, օրուան վար գիներով և հիմա ան ալ հասնելու վրայ էր: Մինչև երեքշաբթի անծայր անհամբերութիւնով մը սպասեց Օրհնօի գալուն և առանց ետին նայելու ինքզինքը չողենաւ նետեց Մարսէլ կրթալու համար, հիւանդ, անոք, անպաշտպան, առանց դրամի, ինք ալ չէր գիտել ինչ ընելու: Բփշկը կողէր արգիլել զայն, բայց ան կը փախէր, ցուցնելով Վէսուվ որուն համար կ'ըսէր թէ զինքը այրել, կլլել կ'ուզէ և որ հիմա գիշերին մէջ հանդարտօրէն կը վառէր, անհուն պինկալեան հուրի մը պայծառութիւնով:

Երկու օրուան ճամբայ Նափօլիէն Մարսէլ, աներեւակայելի փոթորիկ մը, ընկղմելու աստիճան վտանգաւոր կնցութեան մէջ զրաւ շողենաւ: Ամէն մէկ ալիքին, անդունդներ կը պեղուէին շողենաւին տակը որ կ'իջնար, կ'իջնար, կը խորասուղէր. աներեւութանալով լեռնանման ու շղթայադերձ ալիքներուն տակ, Ամէն մէկ հարուածին կը ցնցուէր, կը թաւալէր ահաբեկ, ինչպէս տղայ մը շառաչուն ապտակի մը տակ: Յուսահատ բան մը կար ամբողջ շողենաւին մէջ, և առհասարակ ամենքն ալ հիւանդ էին: Թադէոս պառկած նեղ խցիկին մէջ՝ մահուան քրտինք կը թափէր: Կը զառանցէր: Կ'երեւակայէր թագաւորի պայթիւններ լսել, վիրաւորներու հետ

կը խօսէր, աղարակի հրդեհներ կը մարէր: Կը տեսնար Սիկկիոյ ողողումները, հերարձակ փախտականները տանիքներու վրայ ապաստանած ուր շատ չանցած պիտի ընկուղուէին: Զուրի հեղեղներու վրայէն կը նաւէր: Զուրը, միշտ Զուրն էր որ կուգար կը քանդէր, կը կործանէր, կը խղդէր ամէն բան և հիմա ալ կը բացուէր միլիոնաւոր ու անդնդախոր երախներու մէջ կուլ տալու համար վիթխարի շողեհնաւը, իր բովանդակութիւնով: Յանկարծ լեռնակուտակ ալիքի մը կատարը կը բարձրանար շողեհնաւը, մինչեւ ամպերը, ուրկէց վէստովի արիւնազանգ ու դժոխահուր հնոցին մէջ իյնալ կ'երեւակայէր: Աչքերը արիւնով կը լեցուէին, սիրտը սաստիկ կը զարնէր, և ներսիդին եղածը չեղածը կը փսխէր գետինը ուր կարմիր երակներ կը գրծուէին:

Միեւնոյն խցիկին մէջ, դէմի անկողնեակին վրայ, ուրիշ հայ մը, ռուսիացի, մազոտ, մինչեւ աչքերը մօրուօք, քառսուռնոց, աշխարհական քահանայի պէս մարդ մը, լաթերով պառկած, անտարբեր կ'ուտէր, կը լսէր, կ'երգէր: Հիանալի ձայն մը ունէր և միշտ եկեղեցական երգեցողութիւններ էին կանչածները: Երկու օր անընհատ, մեղեդի, շարական, աղօթք, պատարագ, բան չի մնաց երգեց: Թաղէոս տարիներէ ի վեր պատարագ չէր տեսած և իր բարեպաշտ գաւառացիի խառնուածքովը մեծ հաճոյք պիտի զգար անշուշտ ատոնցմէ, եթէ խելքը գլուխը եղած ըլլար և հասկնար: Բայց հիմա այդ միօրինակ երգասացութիւնը կարծես աւելի կը դրդուէր ու կը կատղեցնէր զինքը: Հիմա Մարտէյլ ըլլալ պէտք էին արդէն, բայց աւիքներուն հետ ծեծկուելով և ապահով ըլլալու համար Պօնիֆաչօի վտանգաւոր նեղուցէն չանցնելով, օր մը կորսնցուցած էին: Դեռ գիշեր մը ու ցորեկ մը ունէին հասնելու համար: Բայց կարծես ալ ոչ ոք յոյս ունէր ողջ առողջ հոն հասնելու: Թաղէոս զառանցանքին մէջ կ'անիծէր առաջին անգամ իր գեղէն բաժնուած օրը և կ'առաջադէր անմիջապէս իր ծննդավայրը դառնալ: Յանկարծ ոգեւարի յետին նոպայի մը մէջ Թաղէոսի խելքը գլուխը եկաւ, աչքերը բացաւ և մը-

տիկ ըրաւ: Ռուսահայը ճիշդ այդ պահուն հիանալիօրէն դաշն ու աղու եղանակով մը, պատարագը լմնցուցած, «Որ օրհնես զայն սիկ»ը, հայ եկեղեցիին յատուկ հրաշակերտ այդ մաղթանքը կը զուրցէր:

— Խաղաղութիւն պարգեւեա՛, ամենայն աշխարհի...

Յանկարծ Թաղէոսի միտքը բան մը ինկածի պէս ձեռքերը վեր վերցուցած, սիրտին խորէն բացազանցեց.

— Ո՛հ, այո՛, խաղաղութիւն պարգեւեա՛:

Ու աչքերը գոցեց, ա՛լ չի բանալու համար, երբ անդին ռուսահայը, պատարագի արարողութիւնները լմնցուցած, հոգեհանգստեան աղօթքներու կը սկսէր:

ԶԻՖԹԷ-ՍՍՐԱՅ.

Ս Ե Ր Ե Ն Ա Տ



Տակաւին տխակներուն՝
Լուսինն ցակ շաւաքսած երգ,
Ո՛վ իմ սրսիս վերք
Դո՛ւն հծծեցիր Սերգ անհուն:
Դեռ գեթինը լազուարթե
Զ'աւրած իր գոյնն ուղեղի,
Ո՛վ Սիրոյս ուղի
Դուն հեւացիր արծաթէ՛...:

Դեռ լուսինն անցաւին հետք
Համբուրելի չդարձած,
— Խորհո՛ւրդ երկնասլաց,
Թրջեցի՛ր իմ սրսիս վերք:

Ե. ԳՕԼԱՆՃԵԱՆ

Պէրպէրեան վարժարանի ամառվերջի հանդէսը կատարուեցաւ երկուշաբթի օրը, Ս. Պատրիարքին նախագահութեամբ, և վկայական ստացան 12 ընթացաւարտներ, որոնց 10ը գաւառացի և 2ը Պոլսեցի: Այս վերջիններուն մէկն է՝ բաղմարդիւն ուսուցչապետին որդին, Օննիկ Ռ. Յ. Պէրպէրեան:




Ծանօթ դրագէտ Ռուբէն Զարդարեանէ ստացած ենք յօդուած մը զոր պիտի հրատարակենք յաջորդ թիւով:

ԾՈՒԱՅԻՆ ՆԱԽԱՐԱՐ

Հասան Հիւանի փաշա, որ ժամանակէ մը ի վեր հիւանդ էր, մեռաւ կիրակի դիշեր, իր ծովեղերեայ ապարանքին մէջ՝ Օրթագիւղ, և յուղարկաւորութիւնը կատարուեցաւ երկուշաբթի, մարմինը հանդիսաւորապէս փոխադրուելով Եյուպ ուր թաղուեցաւ այն դամբարանին մէջ զոր ինք շինել տուած էր քանի մը տարի առաջ։ Երկուշաբթի օրը Պաշտօնական Զեկոյց մը ծանոյց թէ, նկատելով որ ծովային նախարարութեան համար վարչական ու ղինուորական ճիւղերու վերաբերեալ դործերը իրարմէ անջատելը օգտակար պիտի ըլլայ, ըստ այնմ՝ Ծովային նախարար անուանուած է կրթական նախարար ձէլալ պէյ որ պիտի վարէ վարչական ու նախարարական դործերը, իսկ ղինուորական դործառնութիւնները կատարելու և կարգապահութեան հսկելու պաշտօնով՝ Ծովային Սպայակոյտին նախագահ անուանուած է Կայսերական Սուլթանիէ շոգենալին հրամանատար Ֆէրիդ Մէհմէտ Րիֆաթ փաշա։

ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ Նախարար անուանուեցաւ Պետական Խորհուրդին քաղաքային ճիւղին անդամ Հալիմ պէյ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ



Ամէն դարու և ժամանակի մէջ սովորական եղած է տեսնել վեհապետական փոխադարձ այցելութիւններ և անձնական բարեկամ յարաբերութիւններ. բայց այն տեսարանը որ սրբազուեցաւ վերջերս Ֆրանսայի ու Անգլիոյ միջեւ, բոլորովին եղական էր իր տեսակին մէջ և բովանդակ պատմութեան մէջ իր նախընթաց օրինակը չունի։ Ակնարկել կ'ուզենք Ֆրանսայի 65 երեսփոխաններու և ծերակուտականներու ի Լոնտոն իրենց պաշտօնակիցներուն տուած հանդիսաւոր այցելութեան, իրբեւ թարգման իրենց ներկայացուցած ազգին բարեկամական և համակրական զգացմանց հանդէպ բրիտանական ազգին ու ժողովրդեան, որուն վեհապետը առաջին քայլն առած ըլլալուն համար երկու

ազգերն իրարու մօտեցնելու փորձին մէջ, այս անգամ ալ Ֆրանսայի ժողովրդեան ներկայացուցիչներն են որ, Հանրապետութեան նախագահին փոխադարձ այցելութիւնէն ետքը, առաջին քայլը առին պետական բարեկամութեան նախափորձերն հանրութեան մոտքին ու հողիին մէջ աւելի ազէկ ղետեղելու և տարրացնելու դորձին մէջ։ Աւելորդ է ըսել թէ Անգլիոյ Լորտերն ու երեսփոխաններն ալ այնպիսի ջերմ ընդունելութիւն մը ըրին անոնց որ բնաւ տարակոյս չթողուցին թէ լիովին կը գնահատեն իրենց այսր—Մանչեսթր և պաշտօնակիցներուն խաղաղասիրական ձեռնարկը։ Լոնտոնի մէջ այդ ընդունելութեան առթիւ խօսուած ճառերն ու կատարուած հանդէսներն որոնք արձանագրուեցան եւ նկարագրուեցան օրաթերթերուն մէջ, կատարելապէս նոր դարագլուխ մը կը կազմեն քաղաքական պատմութեան մէջ և նոր շրջան մը՝ Անգլիոյ և Ֆրանսայի յարաբերութեանց մէջ։

* * Անգլիա-Ֆրանսէ բարեկամութեան այս ցոյցերուն մէջ կէտ մը կայ, սակայն, որ այս խարհի ընդհանուր խաղաղութեան աեսակէտին վրայ հակադէմքի կը ներդործէ, այն է կարգ մը դիւանագէտներու բանեցուցած լեզուն ու ոճը իրր թէ Անգլիա-Ֆրանսէ այս համաձայնութիւնը ցոյց մ'ըլլայ Գերմանիոյ դէմ, որ բնականաբար դո՛ւ սրտով ու հաշտ աչքով չկրնար դիտել իր յայտնի ոսոխին (Ֆրանսայի) ցարդ իրեն բարեկամ ճանչցուած ազգին (Անգլիոյ) հետ այս աստիճան մօտենալը և փոխադարձ համակրութիւն դտնելը։ Սակայն աւելի լուրջ մտքեր՝ Գերմանիան վշտացնելու բնութիւն չեն վերագրեր երկու դրացի ազգերուն իրարու բարեկամական ձեռք կարկռելու դորձին, ինչպէս որ չեն ըսեր թէ Ռուսիա ալ անդիէն կրնայ վշտանալ, զի գիտեն թէ Ֆրանսա այնպէս կապուած է անոր հետ որ Անգլիոյ մերձեցնալով անկէ չհեռանար բռնաւ։ Ուրեմն ալ խարհի ընդհանուր խաղաղութիւնը ո՛ր և է վտանգի տակ չկրնար Մանչի երկու եզերքները վիճող համաձայնութեան հովերէն. ընդհակառակը, աւելի ևս կ'ապահովուի։

* * Այդ ասպանովութիւնը աւելի ամուր

կը դառնայ իտալիոյ թագաւորին՝ թագուհիին հետ միաւորին Բարիդ տալիք մօտադուտ այցելութեամբը, որ պիտի փոխարինուի Պրանսայի Հանրապետութեան նախագահին կողմէ Հռոմ կատարուելիք ուղեւորութեամբ մը։ Թերեւս այդ պաշտօնական արարողութիւններէն ետք ֆրանսացի և իտալացի երեսփոխաններու միջեւ ալ այցելութիւններ փոխանակուին, ինչպէս եղաւ ի Հոնտոն և ինչպէս պիտի ըլլայ հարկաւ ի Բարիդ՝ փոխադարձ պարտականութեամբ։ Հարկ չիկայ խօսիլ Վիգթոր Էմմանուէլ թագաւորին Անգլիոյ մայրաքաղաքը ընելիք մերձաւոր այցելութեանը վրայ քանի որ փոխադարձութիւն մըն է անիկայ Էտուարտ Է. թագաւորին Հռոմ ըրած այցին և քանի որ արդէն առանց այդ վեհապետական այցելութեանց ալ, ինքնին կը տիրէ Անգլիոյ ու իտալիոյ միջեւ անկեղծ բարեկամութիւն մը որ արտաքին ձեւակերպութիւններով արտայայտուելու կամ նուիրագործուելու պէտք չունի, ըստ որում համերաշխութեան վրայ հիմնուած է։

* * Այս բոլոր ապահովիչ նշաններուն հաւաքակ՝ քաղաքական հորիզոնին վրայ սեւ կէտ մը կայ դարձեալ, որ է Մանչուրիոյ խնդիրը որուն վերջին պայմանաժամը առաջիկայ սեպտեմբեր ամիսն է։ Երեւոյթներուն նայելով՝ Ռուսիա պարպելու միտք չունի Ամուր գետի հարաւակողմը ձեռք ձգած այդ երկիրը, և պիտի ըսէ վճռակի «J'y suis, j'y reste»։ Միւս կողմէ, նկատի առնելով ձաքոնի իրարանցումները, Անգլեւձաբոն դաշնակցութեան գոյութիւնը և Միացեալ Նահանգաց այս խնդրոյն մէջ ցոյց տուած հակառու քաղաքականութիւնը՝ գծուար կ'ըլլայ գիտնալ թէ ինչպէ՞ս պիտի վերջանայ այս խնդիրը։ Եթէ Ռուսիա քաշուի Մանչուրիայէն, իր արժանապատուութիւնը մէջ պիտի խաղայ, ճնշման առջեւ տեղի տուած ըլլալով։ Իսկ եթէ յամառի մնայ, այն ատեն ալ ձորոնի, Անգլիոյ և Միացեալ Նահանգաց արժանապատուութիւնը պիտի վերաւորուի։ Հետեւաբար, թէ ի՞նչ կերպով պիտի լուծուի այս խնդիրը, միջին կէտ մըն է որ քաղաքական հորիզոնին վրայ միշտ անորոշ գոյնով կը նշմարուի։

Մ. ՆԱԹԱՆՍԱՆ

ԲԵՂԵՐՍՊՈՒՐԿԷՆ ծանրակշիւ լուր մը հասաւ չարթուս մէջ։ Ռուսիոյ Հայոց եկեղեցիներուն կալուածները որոնք ցարդ ինքնօրէն կը կառավարուէին, Պետական Վարչութեան կ'անցնին, և այդ եկեղեցիներու կալուածներն ու դրամները որոնք հայ հասարակութեան դպրոցներուն կը գործածուէին՝ հանրային կրթութեան պաշտօնատան պէտք է յանձնուին որ անոնց 100ին 5ը վար պիտի դնէ՝ հետզհետէ հինցած կալուածներն ու գոյքերը նորոգելու և տեղը բերելու համար։ Կայսրութեան պաշտօնաթերթը յօդուած մը հրատարակած է ի բացատրութիւն սոյն Հրամանագրին, աւարկելով թէ մինչեւ ցարդ Հայ Կղերն՝ Հայ Եկեղեցւոյ գոյքերը ու կալուածները չկառավարեց Տէրութեան հաճելի եկեղեցւոյն օգտակար ըլլալու կերպով, և թէ ընդդիմացաւ 1897ի Հրամանագրին գործադրման, որուն համեմատ՝ ո՛չ միայն դպրոցներն, այլ եւ անոնց պահպանման յատկացուած կալուածները պիտի յանձնուէին Կրթական Նախարարութեան։

Ս. Պատրիարք Հայրը՝ այս լրագրական հրատարակութիւնները կարդալով՝ իսկոյն գիր մը ուղղեց Էջմիածին, Ս. Հայրապետին, տեղեկութիւն խնդրելով թէ մինչեւ որ աստիճան ստուգութիւն ունին անոնք և կարգ մը տեսութիւններ սլարդելով։

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ. — Հաճոյքով կ'իմանանք թէ Կ. Պոլսեցի ճարտարապետ Հայկ Էֆ. Զըպճի եղական յաջողութիւն մը ունեցած է՝ մասնակցելով իտալիոյ Վիէնցայի քաղաքային թատրոնին համար բացուած մրցումին և բազմութիւ օտարազգի արուեստագէտներու մէջէն իր դրկած յատակագիծը ընդունել տալով։ Զըպճի Էֆ. հրաւիրուած ըլլալով երթալ անձամբ կատարել թատրոնին շինութիւնը՝ իր՝ գեղեցիկ յատակաձեւին համաձայն՝ մեկնեցաւ նախորդ չարթուն։

Տ. ՄԵԼՔԻՍԵՂԷԿ Սրբազան 1500—2000 ոսկիի գումար մը թողուցած է, կ'ըսուի, բարեգործական նպատակներու յատկանալի։

Արսոնսքր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՎԵԼԻՔ Օրագրի

ՏԱՐԵՐՔ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

115 ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Բնագիտութեան սոյն դասադիրքը որ պատրաստուած է մասնաւորապէս Ազգային վարժարաններու մէջ դորձածուելու համար, յանձնարարելի է նաեւ առ հառարակ ամէն անոնց որ կը հետաքրքրուին բնութեան գաղտնիքներով:

Բնագիտական ամէնէն կնճռոտ հարցերը բացատրուած են պարզ եւ դիւրամբունելի ոճով մը որ արդիւնք է բազմահմուտ հեղինակին երկար տարիներու փորձառութեան իբրեւ ուսուցիչ բնական գիտութեանց կեդրոնական Թուրքիոյ Գօլէճին մէջ:

Դասերը պարզուած են 115 պատկերներով որք աւելի յանկուցիչ կ'ընեն աշակերտին ուսած նիւթերը:

Գինն է միայն 8 դր. 780 երես եւ գօրաւոր կազմով

Կեդրոնատեղին է Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Թղթախանաւանոցը

Թիւ 27, Ֆիննաներլար եօզուսու, Կ. Պոլիս

Կը գտնուի նաեւ բոլոր գրաւաճառաց քով:

Ն Ա Ջ Ի Ա Ա Ր Ի Ա

ՕՍՄԱՆԵԱՆ ՇԱՔԱՐԱԳՈՐԾ ԲԵՐԱՅԻ

Սոյն հանրածանօթ չաքարաւաճառ՝ Բերայի չիտակ ճամբան, Թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բաքիսըռի եւ թէ՛ իբրեւ չաքարաւաճառ, աւելի գո՛՛ ձգելու համար իր բազմաթիւ յաճախորդները: Ամբողջ եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր:

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ Օսմ. չաքարագործը ճոխ միջերը մը ունի հարսանեկան չաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ո՛չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ:

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա. Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101:

6-30

ՆՈՐ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՐԴԸ ԵՒ ԻՐ ՑԵՂԸ, Կեղ. Բրօժ. Ա. Ալպէիսք, Թարգմ. Մ. Կ. Նազիկեան ԷՖ. Սեւային առողջարանութեան կարեւորագոյն գիտելիքներուն վրայ խօսող սոյն ժողովրդապան գիրքը երկրորդ տպագրութեամբ՝ լոյս տեսաւ Ը. Մատթէոսեան տպարանէն: Դին 5 դր.: Վաճառման կեդրոնատեղին է Պալէնց գրասուն Կ. Պոլիս:

ԳՐԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ անգլիէրէնէ հայերէն, որ կը լրացնէ կարեւոր պէտք մը ուսանողներու, ճամբորդներու եւ առեւտրական գործով զբաղողներու համար: Դին 8 դր.: Կը գտնուի բոլոր գրաւաճառներուն քով: Կեդրոնատեղի Սաքաեան տպարան, Կալաթա:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828 - 1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000	Ֆր.
1899ին դանձուած ապահովագիրն	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց դուրսարկն հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ՝ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գիմերով: Նպաստաւոր պայմաններ անհայմեմատ կերպով աւելի դերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք ԶԵՐՄ ԷՆ՝ այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաշխման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎԵՍՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի ՏՅՈՐԷՆՈՒՅԻՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բանաժ Բաքըրնը Օղլու

Մասնաձեւը՝ Ղալաթիա, Ինայէթ Խան, գործակալ Միհրան Էֆ. Դաւիթեան:

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԿԻՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուղաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Վարժարանին

Բերա, Մեծ Փաղոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսանքան աբաուքման

Պալպալեան ամէն օր ակոսայի ամէն տեւակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Դիւերուան ո եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած ակոսաները: Յարեկները ակոսայ քաշել տալու համար ուրիշ վաճառք մը չկայ. քաշել տուողին կամքէն կարեալ է:

Աղբաւանդուն օրի

AU TALON D'OR

Օ ԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՉԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՌԼՕ ԱԶՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶՍՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կաղերու համար տղաորատուած

Կալաթա, Վոյվոսա փողոց, քիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կօշիկներու յանձնարարութեան համար — մանաւանդ չափու վրայ շինուելիք, — կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատունը:

Կ. Յ. ՏԵԻՐՄԵՆՃԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանանք վաճառականական պիտոյից, սպազրական գործերու պատրաստութեան հոգը.

Դիւն ԴիւրՍԱՄԱՏՁԵԼԻ

Մաքուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 5% զեղչ.

Մանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն ժամամբ:

Մանրամասնութեանց համար դիմել

Կ. Յ. ՏԵԻՐՄԵՆՃԵԱՆ

ՍԱՄՍՈՆ

ՖԵՆԻՔՍ ԷՍԲԱՆԵՕԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱՆԱՅ ԸՆԿ.

Հրդեհի եւ Կեանքի Ի ԲԱՐԻՁ


Դրամագլուխ՝ 63,228,000 Ֆրանք: Դրամա-

տուն Ի Կ. Պոլիս՝ Բրէտի Լիօնէ

Դեր-Գործակալ Կ. Պոլսոյ ճիւղին

ՔԱՌԼՕ ԱՀՆԱՄԵԱՆ

Կալաթա, Վոյվոսա փողոց Թիւ 103



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սենեկայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, բռնի ու ոտի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ԲԵՐՍ.

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ.

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամիլէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղիս, Թրամիլէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՒՏԱՐ

Չաբչը Պոյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասարեալ երաւիաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր ֆաղակներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

ՄԱՍՆԱՆՎՈՐԱԿԱՆ
ՇԱՐՔԱՆԿԱՆ
ՄԱՍՆԱՆՎՈՐԱԿԱՆ

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍԱ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիէննա)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԴՈՒԿՍ ԼՈՒԻ ՏԸ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. Ընդդեմ հրդեհի (ի ԲԱՐԹԱՉԷՆ)

ԱԼԼԵԱՆՑԱ

Ծովային ապահովագր. ԸՆԿ. (ի ձԵՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Բուէի Լիօնի

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52—53—54—55—56

ՆՈՐԱԳՈՅՆ

ԵՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԱԼ

Փարիզեան գեղեցիկ տպագրութեամբ
հրատարակուած

ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԳԱՂԻԵՐԷՆ--ՀԱՅԵՐԷՆ

Գ. ՆԱՐ-ՊԼԷԻ

Դին երկու հատորին միասին դահկ. 120

Վաճառման կեդրոնացեղին է

ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ

Ղալաթիա Սեղբոս խան թիւ 5

1—10

ՌՈՊԷՐԴ ԲՈԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը
պիտի սկսի Սեպտ. 2/15: Կարգադրութիւն-
ներ եղած են նոր դիւրութիւններ տալու
վաճառականական ուսմանց համար: Մնայուն
բժիշկ մը՝ աշակերտներու առողջութեան,
մարմնամարզներուն ու խաղերուն, ինչպէս
նաեւ վարժարանին ընդհանուր առողջապա-
հական վիճակին վրայ կը հսկէ: Նախորդ
տարուընէ սկսեալ՝ բացուած է նաեւ փոքր
տղոց յատկացեալ նոր շէնքը, ուր կ'ընդուն-
ուին մինչեւ տասը տարեկան աշակերտներ:

2—12

ՏՈՒՔԹ. Ե. ՄԱՍԻՍ (Բերա, Թագսիմ փողոց, ք. 15) Բացի սովորական ներքին հիւ-
անդութիւններէ, կը դարձանէ մասնաւորաբար, նոր մեթոտներով եւ խնամով, ստա-
մոքսի, աղեաց, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները,
գաղղիական ախտերը (սիֆիլիս եւ այլն) եւ մորթի հիւանդութիւնները: Հիւանդ կ'ըն-
դունի ամէն օր կէս օրէ վերջը:

HOTEL «FERAH»

ՕԹԷԼ «ՖԵՐԱՀ»

Բրինքիքօ, Նիզամի պողոտային վրայ,
Ժողահայեաց, ընդարձակ պարտէզներու մէջ:
Վարձակալը, Առաքել Տերեկեան որ այնքան
ինսուօք կը վարէ Պոլիս Սուլթան Համամի

հանրաճանօթ նախկին Գասպար ճաշարանը,
յանձն առած է նիւթական ամէն զոհողու-
թիւններ ընել՝ իր բազմաթիւ յաճախորդնե-
րուն հանգստութեանը համար:
Գինները չափաւոր. լաւ եւ մաքուր սնունդ.
պանդոկը բաց է Եւրոպական մայիս մէկէն
սկսեալ: